№ 132 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 19 ՅՈՒՆԻՍԻ

1913

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 19 ՅՈՒՆԻՍԻ № 132

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄՇԱԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են տարեկան բաժանորդավճարի կէս մասը, ուղարկել նաեւ երկրորդ մասնավճար **5** րուբլին, որպէսզի բերթի առաքման գործում յուլիսի 1-ից ընդհատում տեղի չունենայ։

Տարեկան բաժանորդավճարը լրացնողները կը ստանան նաեւ խոստացված ՊՐԷՄԻԱՆԵՐԸ։

ԲԺԻՇԿ
ԱՐ. ՉԱՐԳԱՐԵԱՆՑԸ
Մեկնեց ՌՈՒՍԱՍՏԱՆ
մինչև օգոստոսի վերջը։
509. 1—1

ԲԺԻՇԿ
ՄԱԿԱՐԵԱՆՑԸ
Մայիսի 15-ից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը
ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Մասնագիտաբար—միզասեռական, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։
Հասցէն՝ Верхній Бульваръ, д. Зипаловой.
(օ.մ.) առ. 401. 20—12

ԵՐԿՐԻ ՀԱՄԱՐ

Մխիթարական տպաւորութիւն է թողնում գիտնականների համախմբված աշխատանքը Թիֆլիսում ուսումնասիրելու մեր երկրի բնութեան և կուլտուրայի առանձնայատկութիւնները և ասելու նրանց մասին իրանց հեղինակաւոր խօսքը։

Մեր երկրի բնութիւնը։ Որքա՜ն դարեր այդ հարուստ և ինքնատեսակ բնութիւնը սպասել է գիտական հետախոյզ մտքի վերլուծող գործունէութեանը՝ պարզելու իր էութիւնը, որպիսի ծարաւով նա սպասում է այն օրին, երբ բարձրագոյն դպրոցների գիտական կաթեդրաները ամեն օր կը հնչեցնեն կովկասեան երիտասարդութեան ականջներին գիտութիւնների պատգամները և կը զինեն մատաղ սերունդները անմաշ զէնքերով մարտնչելու մեր ժողովրդին ճնշող չարի ու խաւարի ազդեցութիւնների դէմ։

Ներկայում ամեն օր մեր քաղաքի զանազան դահլիճներում 14 սեկցիաներ եռանդագին ժողովներ են անում, արհամարհելով թէ տապը ամառային օդի, թէ ճանապարհից յոգնած մարմնի պահանջը՝ հանգստանալու։

Իւրաքանչիւր նիստ բացում է ճըշմարտութիւնների և գիտական յայտնութիւնների յիշատակելի էջեր, որոնք ոչ միայն յագեցնում են ներկայ հետաքրքրվողներին, այլ և նորանոր խըմորումներով գիտական յղացումներ են արտադրում ապագայ աւելի ևս ընդարձակ ուսումնասիրութիւնների համար։

Չենք կարող ասել, որ կովկասցիները առանձին աչքի ընկնող խոշոր գիտական գործեր են ներկայացրել համագումարին, չենք կարող նոյնպէս ասել, որ նրանք բազմաքանակ են իրանց թւով, թէկուզ փոքրիկ աշխատանքներով. այնուամենայնիւ մենք մտադիր չենք այսօր յանդիմանական խօսքով դիմել մեր երիտասարդութեան։ Կայ յանդիմանութեան տեղիք, բայց մեզ ներկայումս գրաւում է մի ուրիշ խնդիր—հրաւէր կարդալ, որ գոնէ օգտվենք ներկայ համագումարից և աշխատենք սկիզբը դնել նոր գործունէութեան մեր երկրում և մշակենք մի կողմից մեր երկրի ուսումնասիրութեան խնդիրները, միւս կողմից գիտութիւնների տարածման գործը մեր երկրի ժողովրդի մէջ։

Բնագէտների ժողովը, որ հանդէս է գալիս իր 3500 անդամներով, իբրև գիտութեան նուիրվածների և յարգողների մի պատկառելի լեգէօն, ներշնչում է և պէտք է ներշնչի ոգևորութիւն՝ սերմանել, պատւաստել և ծաղկեցնել գիտութիւնը մեր երկրում, որպէս զի մեր խեղճ երկիրը և ժողովուրդը հաղորդակից լինեն լուսաւոր մարդկութեան մտաւոր և բարոյական հարստութեան և ստեղծեն հրաշակերտներ և՛ մեր երկրի ու ժողովրդական մասսաների համար։

Ա. Քալանթար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Բեռլին.—Լրագիրներում տպված է Ժընէվի հայկական կոմիտէտի հետեւեալ հեռագիրը. «Քիւրդերի շարժումը Թիւրքահայաստանում սաստկանում է։ Բազմաթիւ աւազակախմբեր կողոպտում են հայ գիւղերը, սպանում են բնակիչներին։ Այժմ հայկական Ուրանէս և Կարճկան գիւղերը շրջապատված են հազարաւոր քիւրդերով։ Սկսվել է կատաղի կռիւ երկու ցեղերի միջև։ Հայերը բոլորովին անպաշտպան են։ Կատաստրոֆան անխուսափելի է»։

(«Հ. Գ.»)

«Н. В.»-ն Պապաջանեանի Պետական Դումայում արտասանած ճառի առիթով գրում է, որ ռուս հասարակութիւնը պէտք է ողջունէ հայերի վերստին անբաժան Ռուսաստանին միանալու ջերմ ցանկութիւնը։ Պարսկաստանում, օրինակ, ամեն անգամ, երբ յուզմունք էր սկսվում Ռուսաստանի դէմ, առաջին շարքերում կանգնած էին լինում հայերը։ Այժմ նրանք վերադառնում են հին աւանդներին։ Հայկական նոր տրամադրութիւնների անկեղծութիւնը, ի հարկէ, դեռ պէտք է փորձութեան ենթարկվի։ Ցանկանք, որպէս զի հայ պարագլուխների խօսքը գործ լինի»։

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Երզրում, 14 յունիսի

◆ Ստոյգ աղբիւրներից տեղեկութիւն ստացվեց, որ Լազիստանի նաւահանգիստ Րիզէ քաղաքում (Բաթումի և Տրապիզոնի մէջտեղ) լազերը ընդհարում են ունեցել կառավարութեան հետ ինչ-որ դժգոհութիւնների հողի վրա։ Լազերը մասսայական խմբով դիմել են Տրապիզոնի ռուսական հիւպատոսին ռուսահպատակ արձանագրվելու խնդրանքով։ Մանրամասնութիւններ չը կան առ այժմ։

◆ Բիթլիսի Թուխ գիւղի մօտ քիւրդերը սպանել են 2 հայ։ Դիակները անյայտացել են։

◆ Ղարաքիլիսէի մօտ սահմանի վրա Թիւրք զինւորները նորից սպանել են մի հայ փախստականի։ Մի խումբ հայեր էլ բռնվեցին։

◆ Ուրանէս գիւղի (Կարճկան-Բիթլիս) մօտ սպանված է մի քիւրդ։ Շրջակայքի քիւրդերը մեղադրում են հայերին։ Բազմաթիւ զինված խմբերով յարձակում գործեցին հայերի վրա։ Կառավարութիւնը կամք յայտնեց միջամտելու։

Քուրմ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 4 յունիսի

Նախորդ շաբաթը վերջացաւ գաղթականական նոր և աչքի զարնող հոսանքով մը. մէկ օրուան մէջ միայն քաղաքէս մեկնեցան 18—20 երիտասարդներ՝ Ամերիկա երթալու դիտաւորութեամբ։ Գացողները կը հաւատէին, որ իրենց հետ ընկերացողները չափազանց շատ են և, գիւղերէն եկողներն ալ հաշուելով, մինչև Խնուս և Էրզրում չհասած իրենց թիւը կը հասնի 100-ի։

Ինչքէն դըրդուած կը փախչի հայը իր պապենական օջախէն. Ջարդէն, հարստահարութենէն թէ՞ անտեսական տագնապէն։ Երեքն ալ իրարմէ աւելի խիստ են և անհերքելի։ Ո՞ւր պիտի տանի մեզ այս հոսանքը, չենք կարող մարգարէանալ. միայն՝ մեզ կը թուի, թէ դառնութեան բաժակը լեցուած է և Տարօնի նահապետական ժողովուրդը երկրորդ անգամ ևս պիտի ցնցուի «ակն ընդ ական» օրինաց հետեւելու, թէև խիստ դառն ու յուսահատական պայմաններու մէջ։

Կուսակալ Մազհար-բէյ մեկնեցաւ Մուշէն առանց ոևէ կարևոր գործ մը տեսնելու. միայն հաճեցաւ իր հետ վերցնել Տարօնի առաջնորդին պատրաստած մէկ յիշատակագիրը, որ էր թւումն մասանց օրուան հարստահարութեանց և ոճիրներու։

Փաշան մեկներ է մեծ խոստումներով...

Թախիծ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ՇՐՋԱՆԸ

I

> **Մեծ պետութիւնները ցանկանում էին մինչ այժմ խուսափել Հայաստանում առաջացած անհանգստութիւնները եւ կռիւները քաղաքական խնդիր դարձնելու:** Թիւրքիան ևս փափագում է կարծում, որ այդ անհանգստութիւնները **առիթ չը լինեն եւրոպ. միջամտութեան:** Կարելի է համոզված լինել, որ թիւրք կառավարութիւնը պիտի դիմէ եւրոպական օգնութեան և որ եւրոպական մեծ պետութիւնները այնպիսի ձևով պիտի տան այդ օգնութիւնը, որով **պահպանել կարելի լինի թիւրք կառավարութեան հեղինակութիւնը հայկական գաւառներում:**
>
> (Գրէյի ճառը համայնքների պալատում)

Ուշադրութեամբ կարդացէք այս խօսքերը, մանաւանդ ընդգծված տողերը այն քաղաքագէտի ճառից, որ Մերձաւոր Արևելքի մեծ դրամայով պայմանաւորված բարդութիւնների յարդարման գործում կենտրոնական դէմքն է կազմել։ Մի կարդաք այդ տողերը, ինչպէս սովորաբար անում են մեր մէջ, սոսկ այն սպասողականութեամբ, թէ ինչ դիրք է բռնում անգլիական մինիստրը դէպի հայկական հարցը՝ դրական թէ բացասական, համակրական թէ հակակրական։ Համակրանքի և աջակցութեան պատրաստակամութեան խօսքեր շատ էք լսել և լսում էք շարունակ բոլոր պետութիւնների դիւանագէտներից։ Դա չէ այլ ևս էականը ներկայ րօպէին, երբ տարերային ուժգնութեամբ առաջ մղված պրոբլեմի հրատապ այժմէականութիւնը այլ դիրք ու սպասելիքներ է կարօտում եւրոպական կօնցերտից։ Դուք դրէք խոհուն քաղաքագէտի սրատես ակնոցներ և աշխատեցէք քաղաքական հարազատ իմաստը որոնել Գրէյի տողերի մէջ։ Մի բաւականանաք նրանց բառացի նշանակութեամբ, այլ մեկնաբանեցէք ամբողջ կապակցութեան տրամաբանական էութիւնը դիպլոմատի կօնցեպցիայով։

Մինչև դուք այդ փոքր աշխատանքը կը կատարէք, ընթերցող, անցնենք մենք առ այժմ այն նոր հանգրուաններին, որոնք, ըստ երևոյթին, նոր մոմենտներ, աւելի ճիշդ՝ որոշակի դիրք են ստեղծում հայկական հարցի քաղաքական ճակատագրի համար։

Անգլիայի նորագոյն դաշնագիրը Թիւրքիայի հետ մի աւելորդ անգամ ևս ապացուցեց, թէ որքան խելացիօրէն ու հեռատեսութեամբ են մտածում և արագ ու ճարպիկ գործում ծովային Թագուհու դիւանագիտական գլուխները։ Մի առանձին թեմայի նիւթ կարելի է դարձնել տնտեսա-քաղաքական այն ահագին օգուտներն ու ազդեցութիւնները, որոնք ապահովվում են Անգ[illegible] Ասիական Թիւրքիայում՝ Կովէյտ-Բասրայի [illegible] նագրի ուժով։ Ներկայ դէպքում կարող է խօսք լինել միայն այն դիւանագիտական անդրադարձումների մասին՝ հայկական հարցի նկատմամբ, որ անխուսափելիօրէն պիտի ունենար մի այդպիսի ակտ։

Անգլիան, որ, ըստ երևոյթին, մինչև այդ դաշնագիրը այնքան չէր շահագրգռված Փոքր Ասիայում, որքան Ռուսիան՝ քաղաքականապէս, և Գերմանիան՝ տնտեսապէս, մի թռիչքով այնպէս ամրացրեց իր ոտը Առաջաւոր Ասիայում, որ նա իր շահերի բազմակողմանիութեամբ, մանաւանդ յետագայ փայլուն պերսպեկտիվների վերաբերմամբ, դարձաւ այժմ առաջին շահագրգռված պետութիւնը Ասիական Թիւրքիայում։ Անգլիան ոչ միայն աջ ու ձախ հարուածներ տուաւ իր ահաւոր մրցակիցներին, այլ և հաստատեց իր համաշխարհային էքսպանսիվ քաղաքականութեան փարթամ տաբեգրութիւնը, մի նոր խոշոր պլիւսով։

Դա՛ ամենից առաջ մի հարուած էր գերմանական ֆանֆարոնների երազուն Weltpolitik-ի դէմ, որի à la Րօհրբախ իդէօլօգները օրն ի բուն գրում ու ծրագրում էին այն միջոցների մասին, թէ ինչպէս Գերմանիան կարող է ծովային իր մահացու թշնամուն՝ Թիւրքիայի օգնութեամբ ու բարեկամութեամբ՝ կաշկանդել կարևորագոյն կէտերում՝ չը տալով նրան անցք դէպի Պարսից ծոցը, դէպի Հնդկաստանը, նոյն իսկ վերցնելով նրա ձեռքից Եգիպտոսը՝ փակել նրա առաջ նաև Սուէզի ջրանցքը և այլն։ Գերմանական քաղաքականութեան այդ բուռն տենդէնցը, որի վերաբերեալ լուրջ կնճիռներ կիտած «խոհուն» գլուխները ահագին գրական արտադրութիւններ են շուկայ հանել, ցնդեց օդը սապոնի բշտիկի նման։ Եւ այսօր գերմանների բուրժուական մամուլը զսպված զայրոյթով, նախանձից բռնված՝ միայն արձանագրել կարող է, թէ ինչպէս ամենամեծ դաշնակալը Բոսֆորում ընկած լէշի կաշին կամաց-կամաց քերթելու համար՝ ոչ թէ Թիւրքիայի բարեկամ Գերմանիան է, ոչ թէ Աբդուլ Համիդի արևշատութիւնը բաժակաճառերով մաղթող Վիլհէլմ II-ի կառավարութիւնն է, այլ դարձեալ Անգլիան և միմիայն Անգլիան է. նա, որ առանց թմբկահար բարեկամախօսութիւնների, առանց դրագօնական կոպտութեան և էգօիստական ցինիզմի բացայայտ արտայայտութիւնների, որոնք գերմանական դիւանագիտութեան ինքնատիպ առանձնայատկութիւններն են կազմում, կարողանում է միշտ յաջողութեամբ պսակել իր ամեն մի ձեռնարկը մրցութեան անեզր ովկիանում։

Երկրորդ հարուածը՝ մեղմ ու լռելեայն զօնաւորութեամբ՝ ուղղված է Ռուսաստանի առաջխաղաց քաղաքականութեան դէմ դէպի Փոքր-Ասիան։ Նոր դաշնագրի ուժով ամրացնելով իր դիրքերը, Անգլիան բարձրաձայն յայտարարեց Ասիական Թիւրքիայի անձեռնմխելիութեան լօզունգը, իբրև սկզբունք իր այսուհետև ունենալիք քաղաքականութեան Մերձաւոր Արևելքում։ Այդ լօզունգով Անգլիան մի կողմից պարտաւորեցրեց և մօտեցրեց իրան Թիւրքիային, իսկ միւս կողմից առիթ տուեց անգլօ-գերմանական նոր մերձեցման՝ Ասիական Թիւրքիայի կամ աւելի որոշ՝ Փոքր Ասիայի ճակատագրի որոշման հողի վրա։

Անգլիան շատ լաւ էր զգում, որ Փոքր Ասիային, յատկապէս հայկական գաւառներին, գրաւման վտանգ էր սպառնում Կովկասի սահմաններից, որ այդ վտանգը կազմել է միշտ Ռուսաստանի արևելեան քաղաքականութեան վաղեմի փայփայված տենդէնցը և որ այդ տենդէնցը ընդ միշտ խափանելու համար անհրաժեշտ էր նրան մի հզօր զօրավիգ՝ շահագրգռված մեծ դաշնակից։ Ո՞վ կարող էր լինել վերջինս, բայց եթէ ոչ Գերմանիան, [illegible] Փոքր-Ասիայում շատ քաղցր երազներ իրականացնելու բուռն ձգտումներ է ունեցել միշտ։ Գերմանիան, իր կողմից, չունէր այլևս փաստական հնարաւորութիւն ընդդիմանալու կամ դժգոհելու անգլօ-թիւրքական նոր դաշնագրի դէմ, որովհետև այդ դաշնագիրը չէ, էապէս, որ ֆիասկոյի ենթարկեց նրա Weltpolitik-ը (համաշխարհային քաղաքականութիւնը) Մերձաւոր Արևելքում, այլ Թիւրքիայի կրած ռազմական կատաստրոֆները և քաղաքական անթերի վարկաբեկումը։ Դաշնագիրը պսակեց միայն ֆիասկոյի փաստականը՝ իրաւական ձևակերպումներով։ Միւս կողմից նոյն Գերմանիան շահագրգռված է գերազանցապէս, որ գոնէ իր տնտեսա-առևտրական շահագործութեան ռայօնները պահպանվեն ապահովութեամբ, մնան անձեռնմխելի Թիւրքիայի տիրապետութեան ներքոյ։ Եւ եթէ նա տեսնում է այսօր անձեռնմխելիութեան ամուր պատուարներ՝ կառուցված Անգլիայի կողմից, ապա միայն ողջունել կարող է նա այդպիսի մի ակտ և այդ հողի վրա մերձենալու, համաձայնութեան գալու առաջին քայլն անել։ Ռուսաստանից սպառնացող քաղաքական վտանգը՝ Փոքր-Ասիային, մերձեցրեց երկու տնտեսա-առևտրական թշնամիների՝ իրանց շահագործութեան բարեբեր դոմէնները կոլեկտիվ ապահովելու համար։ Միանգամայն բնական ու հասկանալի փաստ։

Ռուսիան, իր կողմից, չունի փաստական առիթ և իրաւական հիմք պաշտօնական որևէ առարկութիւն անելու կատարված փաստի դէմ, որովհետև նրա անելիքը Փոքր-Ասիայում սոսկ լռելեայն փայփայվող տենդէնցներ էին, որոնց իրականացման համար հարկաւոր էր իրերի այլ դասաւորութիւն—կոտորածներով առաջացած մի անարխիական բարդութիւն, որին վերջ տալու համար Ռուսաստանը առիթ ունենար ոտք դնելու Փոքր-Ասիայի հողի վրա և Թիւրքիայի քաղաքական անզօրութիւնը յայտարարելով՝ հարց բարձրացնէր Ասիական Թիւրքիայի բաժանման համար։ Անգլիան, սրա հետ միասին և Գերմանիան կանխեցին իրերի այդօրինակ դասաւորութեան և պիտի ամենայն զգուշութեամբ վերաբերվեն՝ յետագայում բարդութիւններ առաջանալու բոլոր կարելիութիւններին դիմադրաւելու համար։

Սրանով հասանք մենք արդէն այն կէտին, թէ ինչ դիւանագիտական ֆօնի վրա գծագրվեց հայկական հարցը նոր դաշնագրի ուժով։

B. Intimus

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

17 յունիսի

Սօֆիա.—Գլխաւոր բանակից ստացված տեղեկութիւնների համաձայն, յունիսի 16-ին երեկոյեան բուլղարները Գրեվիշտայի մօտերը, լսելով կատաղի հրացանաձգութեան ձայն Դոյրիայի ուղղութեամբ, շտապեցին օգնելու իրանց առաջապահ զօրամասերին. սկսեցին ռումբերով կռիւ և հարկադրեցին յարձակում գործած յոյն զօրքերին նահանջել դէպի Էլէվթերոպոլիս։ Բուլղարները հալածեցին յոյներին մինչև Կալէչիֆլիկ։ Յոյները առանձնապէս խիստ յարձակման ենթարկվեցին Մէշթիանի և Սեմելտօսի կողմից։ Ըստ երևոյթին յոյները մտադրվել էին խզել երկաթուղային կապը Սերէսից մինչև Դրամա։ Բուլղարները այդ շրջանում ունեն բաւականաչափ զօրքեր։ Կռւի հետևանքները յայտնի չեն։

Գեներալ-շտաբը տեղեկութիւն ստացաւ, որ սերբերը մեծ թւով, հետևակ ու հեծեալ, նաև թնդանօթաձիգ գնդեր են կենտրոնացնում Կրիվօլակ երկաթուղային կայարանի մօտերը։ Զլետովի և Իշտիբի միջև գտնվող սերբ զօրքերը նորից կրակ բացին բօլգարական առաջապահ դիրքերի վրա։ Բօլգար զօրքերը պատասխանեցին։ Կռուի հետևանքները յայտնի չեն։ Ուրիշ ճակատամարտ ևս տեղի ունեցաւ Էլէվթէրից դէպի հիւսիս, ուր յոյները օգնութիւն ստանալուց յետոյ ուժեղ կրակ բացին բօլգարների դէմ։ Սկսվեց կատաղի կռիւ։ Վախճանը անյայտ է։

Բօլգարական կառավարութիւնը յանձնարարեց Բէլգրադի և Աթէնքի իր ներկայացուցիչներին բողոքել յոյների երէկվայ յարձակումների դէմ։ Բօլգարական կառավարութիւնը վերցնում է իր վրայից պատասխանատուութիւնը յետագայ հնարաւոր հետևանքների համար, որոնք առաջ կը գան այդօրինակ գործողութիւններից։

—

Բէլգրադ.—Սերբիական Հեռ. Գործակալութեանը հեռագրում են Ուսկիւբից. «Յունիսի 16-ին գիշերվայ ժ. 2-ին սերբ առաջապահ գնդերը Իշտիբի մօտերը ենթարկվեցին բօլգարների յարձակման։ Ժամը 3 ու 40 րոպէին բօլգարները կրակ բացին թնդանօթներից և արշալոյսին կրակն ուղղեցին Բուկօվցայի, Սլէտօվայի և Նէօկազի մօտ բանակ դրած սերբերի դէմ։ Միևնոյն գիշեր բօլգարները յարձակվեցին սերբերի վրա Վալանդօվի մօտ երկաթուղագիծը ձեռք ձգելու նպատակով։ Յետագայ տեղեկութիւնների համաձայն, ներկայումս կռիւը շարունակվում է Սլէտօվայի և Իշտիբի մօտերը գետափին։ Միաժամանակ բօլգարները կռուի են բռնվել յոյն զօրքերի հետ։

—

Սալօնիկ.—Վաղ առաւօտից Գեվգէլիի շրջակայքում կռիւ է տեղի ունենում սերբերի և բօլգարների միջև։ Երկաթուղային հաղորդակցութիւնը Գումենջէից դէպի հիւսիս ընդհատված է։ Կռուի մանրամասնութիւնները յայտնի չեն։ Արժանահաւատ աղբիւրներից տեղեկացնում են, որ բօլգարները առաւօտեան գրաւել են Գեվգէլին, ցիրուցան անելով սերբ զօրքերին։

—

Աթէնք.—Թագաւորը մեկնեց Սալօնիկ։

Յունաց նաւատորմին հրամայված է անյապաղ մեկնել դէպի Էլեվթէր կըղզին։

«Պրես-բիւրօն» հաղորդում է հետևեալ հեռագիրը Սալօնիկից. «Բօլգար զօրաբանակը ընդհանուր արշաւանք սկսեց յոյն և սերբ զօրքերի դէմ։ Սերբերից գրաւված տեղերում բօլգարները, անցնելով արձանագրութեամբ որոշված գիծը, շարժվեցին Մաչուկօվօ, Բօգդանցա և Գեվգէլիի ուղղութեամբ։ Ենթադրվում է, որ Գեվգէլին արդէն ընկել է բօլգարների ձեռքը։ Յոյն զօրքը Մուսաէնի հովտում բօլգարների կրակից ստիպված նահանջեց Տասգէցի կողմը։ Յունիսի 17-ի առ. ժամը 4-ին լսելի էր հրացանաձգութիւն Բօգդանցայի կողմից։ Վարդարի ձախ ափին բօլգարները յարձակվեցին սերբ առաջապահ գնդերի վրա։ Ժամը 8 և 30 րոպէին բօլգարական զօրաբանակը շարժվեց Բագոլիցա լճի ուղղութեամբ»։

Տօկիօ.—Չինական գործերին աւելի իրազեկ «Ջիձի-Սիմբունը» խորհուրդ է տալիս չինական կառավարութեանը զբաղվել ներքին գործերով, աչքը չը հեռացնելով մօնգօլական հարցերից, որոնք անկասկած կը լուծվեն Ռուսաստանի ցանկութեամբ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՕՆԴԻ

Ստացանք Ախալքաղաքից, պ. Զ. Մ. Գրիգորեանի միջոցով հանգանակված 125 րուբլի, որից դուրս գալով ծախք՝ 2 ր. 34 կ. մնացորդն է 122 ր. 66 կ.։ Այդ 125 րուբլին նուիրել են Առաք. Տուն եղբ. Տէր-Մկրտչեան 25 ր., Մելիքսէթ Մելիքեան, Հ. Տէր-Տէրեան, Զ. Գրիգորեան, Առաք. Տուն Արուտչեան-Գէորգեան, Ա. Նալբանդեան, Ա. Պետրեան, Ց. Սուլխանեան՝ 10-ական րուբլի, Յ. Չէրքէզեան, Մ. Անանեանց, Առաք. Տուն Ղահրամանեան-Մեհրաբեան, Ա. Բուրջեան, Ս. Յովհաննիսեան և Գ. Միրզոյեան՝ 5-ական ր.։ Ուրեմն նախորդ ստացածների հետ—34,485 ր. 80 կ. (տես «Մշակ» № 116)—ստացվել է ընդամենը 34.608 ր. 46 կ.։

ԳԷՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԻ ԱՌԻԹՈՎ

Այս հէգ ամբոխի ծափին ու գովքին
Կարօտ չէ բնաւ իմ հպարտ հոգին։
Գամառ-Քաթիպա

Ամեն անգամ, երբ ես այցելում եմ մեր բեղմնաւոր նկարչի պատկերահանդէսը և տեսնում եմ մեր հայ հասարակութեան և մանաւորապէս մեր այսպէս անուանեալ մտաւորականների բացակայութիւնը, մտածում եմ, թէ մի՞թէ դա ապացոյց չէ, որ մենք ընդունակ չենք ամենօրեայ մանր [illegible] մոռանալ մեր դժգոյն շրջապատը՝ պօէզիայի և գեղարուեստի գրաւիչ ու անմեռ իդէալներով ոգևորվելու համար...

Չէ, մենք կուլտուրական հակումներից զուրկ՝ մանր ժողովուրդ ենք. և հերետիկոսութիւն է պնդելը, որ հայերը ասիականութեան մտաւոր անշարժութիւնից շատ հեռու են գնացել։

Ամեն օր հարիւրաւոր և հազարաւոր հայեր անցնում են Թիֆլիսի Ժողովարանի շինութեան մօտից, ուր հանդէս են դրված քանքարաւոր նկարչի աշխատութիւնները, ամեն օր տեսնում են Ժողովարանի մուտքի վրա ամրացրած «Выставка картинъ Башинджагiана» մեծ տառերով գրված ցուցանակը, և ո՞վ է մտնում Ժողովարանի սրահը՝ խրախուսելու համար հայ նկարչի սիրտը... Ո՞ւր են մեր արտիստները, գրողները, ուսուցիչները, փաստաբանները, ինժեներները, բըժիշկները։ Կեանքը իր պէս-պէս շահերով ու սին հաճոյքներով կլանել է ամբողջապէս նրանց միտքն ու սիրտը և տեղ չէ թողել այլ բարձր, չնաշխարհիկ յափշտակութիւնների համար։

Չէ, օտար են մեր սրտին լուսաւորված ժողովրդի կիրթ ձգտումները, և, Աստուած իմ, երբ նայում ես շուրջդ և տեսնում ես մեր իրականութեան մէջ միայն ասիականութեան բիրտ հակումների պէս-պէս արտայայտութիւնները, կեանքի հեռանկարը ծածկվում է աչքիդ առաջ յուսահատութեան մշուշով։

Հայը չունի ազգային արժանապատուութիւն, որի փոխարէն նրա մէջ խիստ զարգացած է անձնասիրութեան զգացմունքը։

Համեմատեցէք հայ ինտելիգենտին լեհի հետ, որը նոյն դժբաղդ քաղաքական հանգամանքների մէջ է ապրում, և դուք կապշէք մեր ազգային պատւի համար նուաստացուցիչ հակադրութիւններից։ Երեք տարի առաջ Սենկեվիչը իր գրական յոբելեանի օրը լեհ հասարակութիւնից ստացաւ բացի այլևայլ նուիրատուութիւններից՝ մի մեծ և փարթամ ագարակ Լեհաստանում, ուր և տեղափոխվեց բնակութեան համար, իսկ երբ մեզանում մարտիրոսական ջանքերի գնով աջողվում է կատարել մի խղճուկ յոբելեան, դա յոբելեան չէ, այլ մուրացիկի թաբախ. ակամայ յիշում ես Գամառ-Քաթիպայի յայտնի «Երկտողը»՝

Ծաղրալի ազգ էք, հայեր, դուք, աւա՜ղ.
Ձեր յոբէլեանն է մուրացկի թաբախ։

Կատալոգը ձեռիս դիտում էի Բաշինջաղեանի գեղեցիկ նկարները, երբ աչքիս դիպաւ նրա մեծադիր քաթանը «Ներսէս V Էջմիածնի Ներսիսեան լճի ափին». ես տեսել էի այդ նկարը և անցեալ տարի... Մի՞թէ այդ պատմական նկարը չը պիտի գնէր մինչև այժմ Էջմիածինը կամ Ներսիսեան դպրոցը ի յիշատակ «Հայրենեաց պաշտպանի». մեր վեհարանի և առաջնորդարանի պատերը մերկ են և զուրկ որևէ գեղարուեստական զարդերից և մտնողի ձանձրոյթը շարժող առաջին տպաւորութիւնն է լինում շուրջը տիրող վհատեցուցիչ ամայութիւնն ու մերկութիւնը. ոչ մի պատկեր, ոչ մի նկար, բացի պաշտօնապէս ընդունված վեհափառի կենդանագրից։

Նոյնիսկ վրացիք գեղարուեստի գնահատութեան մէջ մեզանից շատ առաջ են գընացել. նրանք արդէն հիմք են դրել իրանց ազգային գեղարուեստական թանգարանի և յայտնի վրացի նկարիչ Գաբաշվիլի նշանաւոր նկարներից մէկը գնել 1000 րուբլով, իսկ մեր Բաշինջաղեանի «Քրիստոսը Գեթսեմանի պարտէզում» մեծադիր քաթանը երկրորդ անգամ հանդէս է հանվում, սպասելով, որ մի օր հայ մեկենաս ուշադրութեան կառնէ հայ գեղարուեստագէտի գործը ազգային-եկեղեցական հաստատութեան համար։

Պտտեցէք մեր հարուստների սալօնները և դուք շատ քիչ օրինակներ կը գտնէք հայ նկարիչների ստեղծագործութիւններից, իսկ եւրոպական նկարների անճաշակ պատճէններից որքան կամէք։

Մեր նկարիչները, տեսնելով հայ հասարակութեան և ունևոր դասակարգի տարօրինակ գնահատութիւնը, արդէն դադարել են հանդէս հանել իրանց աշխատութիւնները, որոնք կամ մնում են անվաճառ իրանց Atelier-ներում, կամ երբեմն ուղարկվում են Պետերբուրգ և Մօսկվա ռուս նկարիչների պատկերահանդէսների համար, ուր արժանանում են օտարների գնահատութեան և ուշադրութեան (Բաշինջաղեան, Ֆեթվաճեան, Ցակրեան, Վ. Սուրէնեան և այլք)։

Միայն Գէորգ Բաշինջաղեանն է, որը համբերութեամբ տանելով իր ազգայինների «նուրբ զգայնութիւնը», տասնեակ տարիներ հանդէս է գալիս իր վրձնի նորանոր ստեղծագործութիւններով։

— Ահա գրեթէ 30 տարի է,—ասաց նա ինձ այս անգամ,—որ վրձինս ձեռքիս աշխատում եմ. եթէ ես յափշտակված չը լինէի գեղարուեստի բարձր սիրով, վաղուց թողած կը լինէի ասպարէզս, տեսնելով հայ հասարակութեան կողմից վհատեցուցիչ վերաբերմունքը դէպի գեղարուեստը։ Մենք չունենք ազգային արժանապատուութեան զգացմունք։ Անցեալ տարի Բագուի ժողովարանում իմ պատկերների ցուցահանդէսն էր. միւս ազատ մասը ժողովարանի ակումբանոցի դահլիճն էր, ուր բագուեցիները հաւաքվում էին թուղթ խաղալու և զուարճանալու համար։ Մուտքը մէկ էր. և ինչ էք կարծում. մեր հայերը իմ պատկերների մօտից անցնելով, մտնում էին ակումբանոցի դահլիճը, առանց ուշադրութեան արժանացնելու ուրիշ քաղաքից եկած հայ գեղարուեստագէտի պատկերահանդէսը։

Դրանով վերջացրեց իր խօսքը Բաշինջաղեանը հեգնական դառն ժպիտը երեսին։

Գէորգ Բաշինջաղեանին մնում է մխիթարվել բանաստեղծի խօսքով, որը այնքան լաւ գիտէր հայի հոգուն յատուկ գծերը։

Այս հէգ ամբոխի ծափին ու գովքին
Կարօտ չէ բնաւ իմ հպարտ հոգին...

Ց. Սպէնդիար

ՌՈՒՍ ԲՆԱԳԷՏՆԵՐԻ ԵՒ ԲԺԻՇԿՆԵՐԻ XIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՇՈՒՐՋԸ

XIII բնագէտների և բժիշկների համագումարի բացման առիթով քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի ողջոյնը այսպիսի խօսքերով էր.

«Ալեզարդ, հինաւուրց Թիֆլիս քաղաքի անուամբ ողջունում եմ ձեզ, թանգագին հիւրեր։ Քանիցս հին դարերում մեր երկիրն են եկել զանազան կողմերից բազմաթիւ մարդիկ. ոմանք դրանցից բերում էին սուր ու հուր, աւերում ու քայքայում, միւսները աճապարում էին այստեղ իրանց հայրենիքը ու դաւանանքը պաշտպանելու, ոմանք էլ ընդարձակում էին պետութեան սահմանները...։

«Այսօր առաջին անգամ հազարաւոր մարդիկ եկել են մեզ մօտ գիտութեան գրքով ու ձեռքերին լուսաւորութեան ջահը բռնած։ Հաւատացէք, ուրեմն, պարոններ, որ մեր քաղաքացիք վաղուց ծարաւի են անմիջական կերպով հաղորդակից լինելու ձեզ հետ՝ այն մեծ Ռուսաստանի զաւակներիդ հետ, որի հետ մենք կովկասցիներս ունեցել ենք այնքան ուրախ ու տխուր օրեր, որոնց ժամանակ մենք դարբնել ենք ընդհանուր իդէալներ, յոյսեր ու ակնկալութիւններ։

«Ու նրանց մէջ ամենաուժեղ բուռն տենչանք ունենալու գիտութեան բարձր տաճար։

«Եւ դուք, այդ գերագոյն գիտութեան ու նրա տնկարանի ուսուցիչներդ, մարտիկներդ, դուք բերել էք այն մեր հրաշալի երկիրը, ուր, ասես խայտաբղետ գորգի վրա, բացված է բնութեան բովանդակ գիրքը սկսած մշտապատ ձիւնից մինչև թէյի թուփը։ Նա լայն բացված է ձեր առաջ, պարոններ, կարդացէք այն։ Նա նոյնպէս լայն է բացված, ինչպէս բաց են մեր սրտերը ձեզ համար, թանգագին հիւրեր»։

—

Երէկ, երեկոյեան ժամը 7-ին, Արքունական թատրոնում տեղի ունեցաւ Ռուսաց Աշխարհագրական Ընկ. կովկ. բաժանմունքի և համագումարի աշխարհագրութեան սեկցիայի անդամների միացեալ նիստը, ուր ողջոյնի ճառ արտասանեց բաժանմունքի նախագահ սենատոր Վատացին։ Ապա եղաւ չորս զեկուցում, որոնց թւում գերմանացի Գուգօ ֆօն-Կօնվէնցի ռեֆերատը այն մասին, թէ ինչպէս են պահպանվում բնութեան յիշատակները կուլտուրական երկիրներում։

—

Այսօր, Կովկ. Բժշկ. Ընկերութեան մէջ, երեկ. ժ. 7-ին տեղի կունենայ միացեալ նիստ սեկցիաների անդամների հետ։ Կը լինեն մի քանի զեկուցումներ բժշկական զանազան հարցերի մասին։

—

Այսօր համագումարի անդամներին յա-

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

17 յունիսի

Կ. Պօլիս.—Ֆինանսների մինիստրութիւնը տեղական մամուլի միջոցով յայտարարեց, որ հրապարակային աճուրդով վաճառվելու են 648 միլիօն քառակուսի թիւրքական արշին արքունի հողաբաժինները Բաղդադի, Մօսուլի, Դամասկոսի, Բէյրութի, Մամուրէտուլ-Ազիզի, Սըվազի և Հալէպի վիլայէթներում, նաև հողեր Կադըկ-Քէօյի ծովափին, Պէրայում, Ստամբուլում և Բօսֆօրում։

Օսմանեան և բօլգարական կառավարութիւնները համաձայնութիւն կապեցին, որի համաձայն բօլգարական և օսմանեան շոգենաւերն ազատ մուտք են ունենալու թիւրքաց և բօլգարաց ջրերը։

«Թանինի» ասելով, յոյն պատգամաւոր Դրագումիսի Կ. Պօլիս գալը զուրկ է պաշտօնական բնաւորութիւնից։

Ցեր. ժամը 5-ին Բ. Դրան մօտերքում սկսվեց հրդեհ, որ սպառնում էր արտաքին գործերի մինիստրութեան շինութեան։ Հրդեհը առաջինը երևաց ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյի տան շուրջը, յետոյ այրվեցին 60 ուրիշ շէնքեր։ Այրվեց եգիպտական Կարմիր Մահիկի պահեստը, ուր գտնվում էին 12,000 ոսկու արժ. բրինձ և շինարարական նիւթեր նոյնպէս խոշոր գումարի։ Հրդեհը շարունակվում է։ Այրվեցին մինիստրի տունը և շատ տըներ, որոնց մէջ բնակվում էին գլխաւորաբար աղքատ դասակարգը ու գաղթականներ։

[illegible] Հանգիստ է։

—

Լօնդօն.—Րէյտէրը տեղեկացաւ, որ դեսպանաժողովը գումարվելու է երեքշաբթի։

—

Լօնդօն.—Սուֆրաժիստուհիները Պանգըրստի առաջնորդութեամբ երէկ միտինգ կայացրին Տրաֆալգարի ծառաստանում, որտեղից շարժվեցին Դաունինգստրիտ, մտադրվելով յարձակում գործել մինիստրների կաբինէտի անդամների բնակարանների վրա, բայց հեծեալ ոստիկանները ցրեցին նրանց։

Սուֆրաժիստուհիները հրդեհեցին Լէյչէրսի երկաթուղային կայարանը, որի շուրջ ցրված էին սուֆրաժիստուհիների թռուցիկները։

Մարօկկօյի նախկին սուլթան Աբդիւլ-Ազիզը եկաւ։

Ծովային մեծ վարժութիւնները կը սկսվեն յունիսի 25-ից։ Մասնակցելու են 346 նաւ, որոնցից 72 զրահապատ են։

Կակստօն Հօլլում բացվեց կանանց առևտրի դէմ մաքառող միջազգային կօնգրէսը։ Լորդ Էբէրդինը կառավարութեան անունից ողջունեց կօնգրէսը։

—

Բէրլին.—Րէյխստագը ընդունեց Գերմանիայի զինուորական ոյժերը մեծացնող օրինագիծը, որի դէմ ձայն տուին սօց.-դեմօկրատները, լեհերը, էլզասցիները և առաջադիմականները։ «Հօխ» բացականչելուց յետոյ Վիլհէլմ կայսրը փակեց րէյխստագը մինչև նոյեմ. 7-ը։

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՍԻԱԿԱՆ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՑԵՂԵՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

—օ—

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Այդ խորագրերի տակ Հռոմի «La Tribuna» թերթը զետեղել է E. C. Tedesch-ի, իր առանձին թղթակցի, հետևեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից, մայիս ամսում։

Արևելքում հայերը սիրված չեն... Նրանք մեղադրվում են յափշտակասէր։ Ասում են, թէ նրանք երկդիմախոս են, անվստահելի են։ Այդ ցեղի դէմ կուտակված են կանխակալ կարծիքներ, քամահանք և ամենայն ատելութիւն, որոնք բաժին են ցրված, հալածված, տկար ցեղերի. ցեղեր, որոնք աւելի շուտ ընտրում են դիմադիր կանգնել մըրրիկներին, քան թէ բռնութեամբ, որին համակերպվող չեն, հնարագիտութեամբ, խորամանկութեամբ և հեզաբար համակերպվել։

Մուսուլմանները դեռ այսօր էլ նայում են նրանց վրա հերոսական շրջանի օսմանլըների տեսակէտով՝ հայը ստրուկ է ծընված. հայ կինը Ալլահից սահմանված է հարէմի աւարը լինել։ Որովհետև Թիւրքիան այսպէս է. ամենայն ինչ շուրջը փոխվում է տարիների թաւալվելովը, բայց կայսրութիւնը կառավարող մարդկանց ներքին մտածութիւնը երբէք չի փոխվում։ Հներ են նրանք թէ նորեր, իրանց բարոյականութիւնը մի քանի այդպիսի տարրական և հնացած-մաշված ձևերի տակ բիւրեղացած է...

Այստեղ հայերը սիրված չեն։ Ռուսաստանը, որ իր հաշիւները երկար պայմանժամով բռնել գիտէ, առանձին իմն բարեկամութեամբ է վարվում հայերի հետ, իր հպատակներն են եղել նրանք թէ ոչ. բայց անգլիացիները, որոնք ընդհանրապէս վերիներես զգացման լուսատես վարպետներն են, կարեկցում և յուզվում են հայ ցեղի թշուառ վիճակի վրա նախամեծարութեամբ, մինչև իսկ Գերմանիայում, չը նայած յարատև գորովին առ իր այդ մի տեսակ ամերիկական... քուզէնը, գորով՝ որ տեւտօնը տածում է առ թիւրքն, այնտեղ ևս սկսվում է հայերի մասին մի հոգածութիւն նախամեծարութեամբ՝ բնական է՝ Ադանայի հայերի մասին, ուր ծաղկում է գերմանական տուրիստ արուեստը։

Ուստի մարգարէ լինելու պէտք չը կայ մէկին՝ այժմէն բացորոշ յայտնելու, որ ի մօտոյ հայկական խնդիրը պարտաւորապէս պիտի գրաւէ Եւրոպայի ուշադրութիւնը (և կասեմ առաւել ևս պիտի շահագրգռէ մեզ իտալացիներիս), անգամ եթէ, որ անկարելի չէ, Ռուսաստանի կողմից Հայաստանը գրաւելը նշան չը տայ Ասիական Թիւրքիայի հաշուեյարդարութեանը, մի գամ որ աւարտ է առնում Եւրոպական Թիւրքիայինը։

⁂

Հայկական հարցը ըստ էութեան մի սոսկալի պարզութիւն ունի։ Օսմ. Հայաստանում, արդիւնաբերող և աշխատաւոր ժողովուրդը, հեզաբնոյթ, տոկուն, ուշիմ, ցեղն որ առաջադիմում է, եւրօպական ցեղը, նա չի ապրում, բայց եթէ այնպէս անունով։ Եւ նա պահանջում է, պարզ ի պարզոյ, կեանքի իրաւունքը։

Զի կեանք չէ այնպիսունը, որ ոչ մի ստոյգ գիտութիւն չունի, թէ ինքը վաղիւ սպանվելու չէ մի որևէ պատրուակով. մինչ հակառակը՝ գիտէ միշտ ստուգիւ, որ կողոպտվելու է, և սակայն առանց պատրուակի, այլ միայն այնու՝ որ հայ է։ Այս ազգին, որ մեր դարից է, պատահում է այն՝ ինչ կը պատահէր մեզ 20-րդ դարի ազատ քաղաքացիներիս, եթէ, յանկարծ, նետվէինք յետ մի վաղանցեալ դար, միջնադարեան մի խիստ բարօնութեան մէջ, անկերպարան ամբոխի վերածված՝ և մատնված ըստ քմաց հարկերի և կռուերի։ Բարօնի կամ նրա տեղակալներից մէկի մի քմահաճոյքը լոկ կարդարացնէր մեր գոյքի աւարումը, մեր կանանց անպատուումը, մարդադաւական բռնութիւնը մեր անձի դէմ։ Բարբարոս խուժանը մեզ իբրև թշնամի կը նկատէր, կապրէր անձկութեամբ սպասելով տիրոջից մի նշանի՝ մեզ համագումար ջարդելու, բնաջինջ անելու և կը թեթևացնէին իրանց սպասումը գազանաբար վարմունքով, անարգանքով, որպէս իրանցից ցածր մարդկանց հետ, որոնք սահմանված են մի օր սպանդանոց քշվելու... Մեզ, որ մարմնացած իմացականութիւնն ունենք ինչ և ինչ էական մեծամեծ սկզբունքների, մեզ, որ արիւն մեր արիւնից ենք արել մեզ համար մարդու իրաւունքները, կը թւէր, թէ գոհ ենք մի սոսկալի երազի...

Մինչ արդ այդպիսի մի հրէշաւոր իրականութեան դէմ թալկանում է հայկական վիլայէթներում այդ ցեղը, որի անցած փառքի մասին կը զրուցէ ձեզ ամենայն պատմական երկ և որը—ինչ աւելի ևս կարևորն է մարդկային կենցաղին—Եւրոպայում, Ասիայում, Ամերիկայում, Աֆրիկայում, ուր և հասնի նրան շունչ քաշել, իրան ամենաընդունակների շարքումն է ցոյց տալիս մեր քաղաքակրթութեան մտաւոր ու նիւթական զարգացման նոյն իսկ ամենադժուարին ձևերի մէջ։

Հայերն, եղբայրներն, ազգականներն այդ հայերի, որոնց յատուկ ձիրքով և անզուգական արդիւնքով հրահանգվելը մենք տեսնում ենք վաճառականութեան և գանձային տեսչութեան ասպարէզների վրա Անգլիայում և Ռուսաստանում և ամբողջ Արևելքում—որոնք մեր ընկերներն են Փադուայի և Պարիզի համալսարաններում, ուր ամենակայտառ ուշիմութիւն են հանդէս բերում—որոնց ուր էլ որ հանդիպում ենք Եւրոպայում՝ թւում են մեզ բոլորովին մեզանից. ազգականներն այդ հայերի, որոնք անվիճելի կերպով մեր դարի մարդիկ են և որոնց իրանց ցեղական հանճարը մղում է հետամտելու ժամանակակից մտքի ամենախիզախ վերացումներին՝ ապագայի տենչով լի, ազգակիցներն այդ հայերի այս վերջին 20-ամեակում (ոչ թէ անցած-գնացած դարերում) հազարաւորներով ջարդվեցին մոլեռանդ խուժանից. Աբդիւլ-Համիդի թագաւորութեան օրով էր այդ թէ երիտասարդ-թիւրքի սահմանադրութեան վարչութեան օրով։ Սարսափահար գաղթեցին նրանք բնավայր հայրենիքից և իրանց սեփականութիւնը յափշտակվեց։ Փոթորիկն անց, նրանք վերադարձան իրանց արարքը յետ ստանալու, որից նրանց մերկ ու կապուտ էր արել անողորմ ջարդը, ու գտան իրանց տների մէջ մի նոր տէր հաստատված. յոլուզակը։ Տաժանքով նրանք իրանց համար մի նոր կենցաղ վերակազմեցին, հուպ իրանց ստացուածքին, որի վայելքն այժմ ուրիշներն ունէին, յուսով մի օր վերստին ձեռք բերել նոյնը, հոգեմաշ աշխատութեամբ ձեռք զարկին մի այլ հողից, մի այլ արուեստագործութիւնից իրանց հանապազորդ հացը հայթայթելու։ Բայց և այդ անօգուտ, որովհետև երբ հունձն հասնում է և բերքն շտեմարանվելու կամ վաճառք հանելու պատրաստ... իջնում է լեռնից անխուսափելի պատուհասը, քիւրդ իշխանիկը, և զգանում և աւարում է բոլորը։ Բաղդ է, եթէ գոհ է ինչքն աւարելով և չի բռնաբարում կին ու աղջիկ և չի սպանում։

Աւազակ իշխանիկը տիրապետում է։ Նոր ռէժիմը, իր արշալուսին, դրանց ամենահամարձակներից մի քանիսին աքսորեց. այդ ժամանակ ահա Ահմէդ Րիզան, Երիտասարդ-Թիւրքիայի փիլիսոփան, ասաց՝ «հայկական հարցը վերջացաւ»։ Սակայն դէպքերը ամենևին չը յամեցին ակներև կացնելու թէ Օգիւստ Քօնթի ընթերցումը բաւական չէ կեանքի դառն իրականութեան մէջ խորամուխ լինելու։ Մէկ տարի չէր անցել... հայկական հարցի վերջանալուց, 25,000 հայ կոտորվեցին Ադանայում։ Օսմանեան ամբողջ Հայաստանում վերադարձրված էր բարբարոս ռէժիմին, առանց որ դրանից ամաչէին սահմանադրական Թիւրքիայի ազատականները. քիւրդ իշխանիկները այնպէս վստահ և անարգել ձեռք էին առել նորից իրանց իշխանութիւնը, որ «Մ. և Ա.» կօմիտէի գաղտնի պատուիրակները նրանցից օգտվեցին ինչպէս աւագ ընտրողներից, որոնք անվիճելի ազդեցութիւն ունէին իրանցից կղեքված հայերի վրա, զի սրանք երկիւղ կրելով աւելի վատիցը՝ համահաւաք քուէ տուին կօմիտէի թեկնածուներին՝ ի փոխարինութիւն մնալով շարունակ աւազակ քիւրդի ծայրայեղ բռնաւորութեան տակ։

Այդ բոլորը, կրկնում եմ, չէ պատահում մի հեռաւոր դարում, այլ մեր օրերում. և չէ պատահում Պօլինէզիայում, այլ համարեա Եւրոպայում, Ռուսաստանի սահմանների վրա... Այդ սահմանների ներսում (կարծես բաղդատութեան միջոցով իրանց վիճակի խստութիւնն աւելի զգալու համար) օսմանեան հայերը տեսնում են Ռուսաստատուել մասնագէտներ ցոյց կը տան Թիֆլիսի հնութիւնները ու հաստատութիւնները։

Ե.

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԲԱՑՈՒՄԸ

Երէկ, յունիսի 18-ին, ցերեկվայ ժամը 11-ին, տեղի ունեցաւ նոր վաճառականական բանկի գործառնութիւնների բացումը։ Սկզբում մաղթանք կատարեցին ռուս և հայ հոգևորականութիւնները. ապա բանկի խորհրդի նախագահ Ա. Միլեան, դիմելով բանկի պաշտօնեաներին և ծառայողներին, շնորհաւորեց գործունէութեան սկիզբը, յորդորեց ամենքին գործել համերաշխ, սիրով, եռանդով և արդարացնել այն յոյսերը, որ բանկի ակցիօնէրները դրել են նրա վրա։

Նոր բանկը երէկվանից սկսեց առևտրական և բանկային ամեն տեսակ գործառնութիւններ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

XIV*)

Նախորդ յօդուածներումս առաջ եմ բերել մի շարք անհերքելի, իրական կեանքից քաղած դառն փաստեր՝ ապացուցանելու համար մեր ուսուցչութեան որոշ մասի անշահաւէտ գործունէութիւնն և մտաւոր անճարակ, յետամնաց պատրաստութիւնը։

Անկասկած այդ ցաւոտ երևոյթներն ունեն իրանց հիմնական, ծանրակշիռ պատճառները. օր. հայ ուսուցչի անապահով, երերուն, անվերջ հալածանքների ու պատահականութիւնների մատնված վիճակը, իրաւունքների ու պարտականութիւնների սահմանի անորոշ լինելը, դպրոցական ներքին կանոնադրութեան բացակայութիւնը, աշխատանքի վարձատրութեան խղճալի չափն ու ձևը և բազմազան խոցոտ վէրքեր, որոնք երկար տարիների ընթացքում մնալով նոյն անբուժելի, վարակիչ դրութեան մէջ՝ թունաւորել են կրթական կեանքը։

Բացի վերոյիշեալ չափազանց աննպաստ պայմաններից, գոյութիւն ունի մի ուրիշ բոլորովին առանձնայատուկ, անհատական բնոյթ կրող, ոչ պակաս վնասակար չարիք, որ դպրոց են բերում իրանց հետ այն պատահական, անկոչ, սունկի նման բուսած «գործիչները», որոնք ուղղակի պատուհաս են դառել հասարակութեան և կրթական գործի համար։

Տարերային ուժով ներս շպրտված պարագլուխների ձեռքով ազատ համարձակ կատարած ամօթալի պրօֆանացիաներ... ահա այն մահաբեր երևոյթը, որից անչափ տանջվել, նահատակվել են մեր անպաշտպան դպրոցներից շատ-շատերը։

Ամեն մի հասարակական պաշտօն, որքան էլ վեհ կոչում և անգնահատելի արժանիքներ ունենայ, երբ գտնվում է պրօֆանների ձեռքում, նսեմանալով, ստորանալով դառնում է այդպիսի անբարեխիղճ անհատների համար մի անախորժելի, անտանելի բեռ, որ մի կերպ քարշ տալու և որից ազատվելու համար միջոցների մէջ խտրութիւն չեն դնում։

Ներկայումս մեր կրթական նուիրական ասպարէզը և մանկավարժական գրաւիչ գործունէութիւնն անխնայաբար շահագործվում են թիւրիմացութեամբ «ուսուցիչ» կոչվող ավանտիւրիստներից, որոնք չունեն բնական ոչ մի ձգտում, օգտակար լինելու ցանկութիւն և անկեղծ սէր՝ կատարելու այդչափ ծանր, պատասխանատու պարտականութիւն։

Այդ տիպի գործիչները միշտ էլ կը լինեն վնասակար, անհանդուրժելի մեր դպրոցական կեանքի համար, որքան էլ աշխատենք նրանց օրգանապէս կապել, միացնել կրթական գործի, իրանց պրօֆեսիայի հետ և դնենք նրանց աւելի մխիթարական, աւելի տանելի տնտեսական պայմանների մէջ...

Горбатаго могила исправитъ.

Հակառակ այդ ինքնաբոյս, անընդունակ ժամանակաւոր տարրերի, մեր ուսուցչութեան մէջ կան և այնպիսի ույժեր, որոնք օժտված լինելով հասարակական գործչին անհրաժեշտ բարեմասնութիւններով՝ ունեն անսպառելի եռանդ, անշեղ համոզմունք, անջինջ սէր, անծայր զգացմունք և ոգևորութիւն, բայց դժբաղդաբար այս ներդաշնակ դրական կողմերին խանգարում են մտաւոր ոչ լիակատար պաշարը և մանկավարժական հարկաւոր փորձառութեան բացակայութիւնը։

Այդ աչք ծակող թերութիւններն աստիճանաբար հարթելու, կոկելու համար հարկաւոր է դիմել այն խելացի միջոցներին, որոնք լուսաւորված երկրներում միշտ էլ նպաստում են կրթական գործչի ինքնազարգացման և բազմակողմանի պատրաստութեան։

Իմ խօսքը մանկավարժական, հանրակրթական ամառային կուրսերի, մասնագիտական հիմնարկութիւնների, փորձերի, դասախօսութիւնների և նման պարբերական ձեռնարկութիւնների մասին է, որ ուսուցչին հիմնաւորապէս զարգացնելու, իր պրօֆեսիայի մէջ աւելի հմտացնելու գործում անփոխարինելի նշանակութիւն ունեն։

Երևանի թեմի ուսուցչական վերջին համագումարում մի քանի անգամ շեշտվեց մանկավարժական կուրսերի հաստատման պահանջը, պարզվեց որ առաջնորդն ամառային դասընթացքների ջերմ պաշտպաններից է և նոյնիսկ այս ուղղութեամբ արել է դրական քայլեր։ Բայց արդեօք գոնէ մօտիկ ապագայում այդ գեղեցիկ միտքն իրականանալու հաստատուն շանսեր ունի՞... Այդ կասկածելի հարցը դժբաղդաբար շատերիս համար մնաց անպատասխան։

Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻՑ

II

Մեր մանկավարժները

Բագու, 7 յունիսի

Վերջապէս վերջացաւ գիմնազիայի ուսուցիչ կոմս Ապրակսինի սպանութեան գործը, որը ամիսների ընթացքում լարել էր հասարակութեան ուշադրութիւնը։

Առաջին և եզակի մի դէպք չէ այդ վերջին տարիների ընթացքում, երբ աշակերտը սպանում է իր ուսուցչին, և գուցէ այնքան էլ իր վրա չը գրաւէր հասարակութեան ուշադրութիւնը, իբրև մի սովորական երևոյթ մեր մատաղ սերնդի վերջին տարիների նեարդային ապրումների շրջանից՝ երբ դասարան չը փոխելու կամ վատ թւանշան ստանալու պատճառով շատերն են ինքնասպանութիւն գործել, կամ իրանց ուսուցիչների վրա մահափորձեր կատարել։

Սակայն գործի դատավարութեան ընթացքում մի շարք աշակերտ-վկաների ցուցմունքները գործին այնպիսի մի կօշմարային տեսք տուեցին, որ անկարելի է նրա վրա ուշադրութիւն չը դարձնել։

Վերջին տարիներս մեր մատաղ, դպրոցական սերունդը, աշակերտութիւնը, բարոյական մի այնպիսի սոսկալի անկման է հասել, որ մարդ ուղղակի զարհուրում է տեսնելով ու լսելով նրանց արարքների մասին։ Մեր դպրոցները ներկայումս անբարոյականութեան մի-մի ճահիճներ են ներկայացնում, որի միկրօբները դպրոցի պատերից շատ դէն են անցնում։

Եւ այդ ճահիճների մէջ է, որ ներկայումս կրթվում, դաստիարակվում է մեր մատաղ սերունդը, այդ ճահիճներից է՝ որ մենք յոյս ունենք իբր թէ մարդկութեան համար պիտանի անդամներ պէտք է դուրս գան...

Մեր փտած հասարակական կեանքի իսկական արտայայտութիւնն է այդ, որը դժբաղդաբար այժմ գիտութեան տաճարն էլ է ոտք դրել և սպառնում անդունդի ծայրը հասցնել նրան։

Եւ ով պէտք է դրա առաջն առնէ, ով պէտք է մեր մատաղ սերնդին պահպանէ դպրոցի պատերից դուրս կատարվող անբարոյական ճահճի ազդեցութիւնից. մեզ թւում է, մենք մինչև այժմ հաւատացած ենք եղել, որ այդ այն մարդկանց պարտականութիւնն է, որոնց յանձնված է մեր մատաղ սերնդի դաստիարակութեան գործը՝ մանկավարժների, ուսուցիչների։

Մեզ թւում է, կամ գոնէ մինչև այժմ թւացել է, որ դրսի փչացած բարքերին իբրև հակադեղ, նրա թունաւոր ազդեցութիւնը ոչնչացնող մի միջավայր պէտք է ներկայացնի իրանից աշակերտութեան համար ուսուցչութիւնը. և սակայն վերջին տարիներս տեղի ունեցած մի շարք վրդովեցուցիչ փաստեր գալիս են ապացուցելու, որ ընդհակառակը շատ-շատերը մեր մանկավարժներից, այն մարդկանցից, որոնց վրա մի շատ ծանր և վեհ պարտականութիւն կայ կրթել, դաստիարակել դեռ ևս չը խմորված, աշխարհի չարին ու բարուն հետ դեռ ևս անծանօթ մանուկներին,—ընդհակառակը իրենք են եղել նրանց վատ ուղեցոյցները։

Դեռ շատ ժամանակ չէ անցել այն օրվանից, երբ Բագուի հայոց դպրոցի ուսուցիչներից մէկը օրը-ցերեկով փողոցում մահափորձ էր կատարել իր նախկին աշակերտուհու վրա, որ մերժել էր նրա սէրը. մի քանի օր է անցել, երբ տեղիս դատարանում քննվում էր նոյն դպրոցի մի այլ ուսուցչի գործը, որին մեղադրում էին իր աշակերտուհիներից մէկի հետ սիրային կապ հաստատելու մէջ և որը իրան մեղադրողներին դատարան էր քարշ տուել իր անունը վարկաբեկելու համար և ուր նրան մեղադրողները կատարելապէս արդարացան, կամ այլ խօսքով ասած, նրա վրա բարդած մեղադրանքները հիմնաւոր ճանաչվեցին։

Ահա 2 օր է քննվում է նոյնանման մի ուրիշ գործ. գիմնազիայի աշակերտ Բեալբօվի գործը, որը մեղադրվում էր իր ուսուցիչ կոմս Ապրակսինին սպանելու մէջ։

Եւ ահա դատարանում պարզվում է մի քստմնելի փաստ. բանից դուրս է գալիս, որ սպանված ուսուցիչը, որին յանձնված է եղել մեր աշակերտութեան մի մեծ մասի դաստիարակութեան գործը, բացի այն, որ կաշառքների միջոցով իր աշակերտներին լաւ թւանշաններ է եղել դնելիս, իր վարքով անբարոյականութեան օրինակներ էլ է եղել տալիս նրանց. ջահել, գեղեցիկ աշակերտներին նա սիրային բովանդակութեամբ տոմսակներ է եղել գրելիս, հիւրասիրելիս է եղել նրանց քաղցրաւենիքներով, նրանց հետ միասին հիւրանոցներ է եղել գնալիս և այնպիսի առաջարկութիւններ է եղել անելիս, որ վկայ աշակերտները նոյն իսկ հնարաւոր չեն համարում այդ առաջարկութիւններն ու խօսքերը կրկնելու դատաւորների առաջ...

Պարզվում է նոյնպէս մի այլ հանգամանք, որ պարզ ցոյց է տալիս, թէ որքան լուրջ են եղել նոյնիսկ թէ դպրոցական վարչութիւնը և թէ ծնողական խորհուրդը ուսուցչի այդ արարքների վրա. մի դպրոցից իր վատ վարքի համար հեռացված ուսուցիչը ընդունվում է մի այլ դպրոցի վարչութեան կողմից, իսկ ծնողական և մանկավարժական խորհուրդը անուշադիր է թողնում աշակերտների գանգատը ուսուցչի վատ վարքի մասին...

Եւ այդ բոլորից յետոյ մենք դեռ զարմանում ենք, որ մեր աշակերտութիւնը բարոյական այնպիսի անկման է հասել, ինչպէս այժմ է։

Չէ որ «каковъ попъ, таковъ и приходъ».

Վաղարշակ Թումանեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լուրեր Բանանցից

Բանանց (Գանձ. գաւ.), 7 յունիսի

Գանձակում լուր է պտտվում, թէ իբր Բանանցում երեխաների վարակիչ հիւանդութիւն է տարածված, որի պատճառով շատերը ցանկանում են զրկվել սար գնալուց։ Յայտնում ենք ի գիտութիւն, որ այդ լուրը ոչ մի հիմք չունի։ Ներկայումս Բանանցում ոչ մի հիւանդութիւն չը կայ։

Գիւղիս տանուտէր Սարգիս Յակոբեանցը, չը ցանկանալով այլևս ծառայել, ներկայացրել է յայտարարութիւն՝ հեռանալու։ Նահանգապետը, չը մերժելով Յակոբեանցի խնդիրքը, ազատել է նրան ծառայութիւնից։

Այս տարի պտուղը չափազանց առատ է։

Վռամ. Եպիսկոպոսեանց

Գիւղական բարքերից

Սղնախ, 11 յունիսի

Բօդբէ գիւղում մի վրացուհու այգի են մտնում գիւղի տանուտէրի գոմէշները և փչացնում այգին։ Այգետիրուհին բռնում է գոմէշներին և կապում։ Գալիս է տանուտէրի կինը և պահանջում, որ կինը արձակէ գոմէշներին, որի մասին կանանց մէջ տեղի է ունենում վիճաբանութիւն։ Զայրացած՝ տանուտէրի կինը գնում է իր ամուսնու մօտ և գանգատվում նրան, որ գեղջկուհին համարձակվեց անպատւել իրան՝ «տանուտէրի» կնոջը։ Տանուտէրը հրամայում է գիւղի պահապաններին, որ յանցաւոր կնոջը բերեն իր մօտ։ Հրամանը կատարվում է։ Տանուտէրը բռնում է կնոջը և քաշքշելով սպառնալիքներ թափում. «Գոմում կը փըտեցնեմ քեզ. ինչպէս դու համարձակվեցիր կնոջս անպատւել»։ Վախեցած կինը ուշաթափվում է, լեզուն կապվում, մի քանի օր հիւանդ պառկում է անկողնում, ոչ ուտում է և ոչ խմում։

N. N.

Ջրի ցաւն սկսվեց

Ներքին-Ագուլիս, 3 յունիսի

Ահա քանի օր է, ինչ վերին-ագուլեցիները կտրելով գետաջուրը՝ մեզ զրկել են ջրից, և մեր արտերը գտնվում են խղճալի դրութեան մէջ։

Ներքին-ագուլեցին բոլորովին յուսահատվել է և գլուխը կորցրած՝ չը գիտէ թէ ինչ անէ. դիմում է միրհաբին, բայց մի որոշ պատասխան չէ ստանում, և գիւղացին դառն սրտով թողնում է ծարաւ արտը, գալիս գիւղամէջ՝ իրա սև օրն է տալիս։

Շատ ցաւալի է մեր գիւղացու վիճակը. խեղճը աշնանը ուրախ սրտով սերմ է գցում հողը, յոյս դնելով որ գալ տարվայ իր հացը վերցնելու է, արտը խնայում-փայփայում իր զաւակի պէս, և ահա մինչև մի 15 օր համարեա հասնելու վրա է. իսկ վերին-ագուլեցիները իրանց այդ վարմունքով ուզում են 40—50 աղքատ տանը իրանց չոր հացից զրկել և թշուառութեան գուբը ուղարկել։

Մայիսի 26-ին նոյն խնդրի առիթով պատահում է հետևեալ դէպքը։

Ներքին-ագուլեցիք գնում են Վերին-Ագուլիս՝ օրէնքի հիման վրա ջուրը կապելու՝ և տեսնում են, որ իրանցից վերև՝ գետի բարձունքին հաւաքվել են հարիւրից աւելի կանայք, աղջիկներ և երեխաներ և սկսում են բարձրից կարկուտի պէս քար տեղալ յիշեալ 7 հոգու վրա՝ բղաւելով. «Ձեզ ջուր չունենք, հեռացէք»։ Գիւղացիները, տեսնելով որ գործերը կանանց հետ է, այլ ոչ տղամարդկանց, լուռ կերպով հեռանում են և դիմում իշխանութեանը։

Հմ. Մակարեան

Չորութեան նշաններ

Նոր-Բայազէտ, 11 յունիսի

Անձրևները քիչ-քիչ են տեղում։ Չը նայելով որ մեր ցանքերի համար յունիսի անձրևները անհրաժեշտ են և ժամանակին, բայց և այնպէս անձրևները շատ սակաւ են այս տարի։ Այդ իսկ պատճառով մեր երկրի հողագործ ժողովուրդը աւելի մեծ տագնապի մէջ է ընկնելու, երբ յունիսը անցնի առանց անձրևների... Զէ որ «եղիական անձրևները», ինչպէս ժողովուրդն է ասում, նրա ցանքերի համար «մարգարիտներ» են բերելու։ Իրօք, մեր ժողովրդի մանաւանդ աշխատաւոր դասը, որի միակ յոյսը դրված է ցանքերի և խոտաբերքի վրա, եղանակների անբարեյաջողութեան տակ կամ կլիմայական ազդեցութեամբ՝ աղքատում ու այլայլվում է և իր գլուխը կորցնելով մեծ յուսահատութեան մէջ ընկնում։ Զէ որ ժողովրդի աչքը վախեցել է, մի ժողովուրդ, որը իր ապրուստը սպասում է միմիայն ցանքերից, քանի որ կողմնակի ոչ մի եկամուտ չունի և ոչ մի կողմից օգնութիւն՝ իր ընտանիքը կերակրելու համար։ Այդ տեսակէտից՝ հասկանալի է թէ ինչ կը լինի հողագործ դասակարգի դրութիւնը, երբ այս տարի էլ բնական պատահարներից մէկը, օր. երաշտը, մեծ վնաս հասցնի նրա ցանքերին։

Այդպիսով մեր հողագործութիւնը իր քայքայված տնտեսութեան վրա աւելացնելու է մի մեծ դժբաղդութիւն, մի մեծ գաղթ *) դէպի օտարութիւն, ուր նրան սպասում է ամեն բան, բացի կեանքի երջանկութիւնը և հայրենիքի ու ծննդավայրի մաքուր օդն ու ջուրը։

Թող բնութիւնը գոնէ խղճայ այս տարի և տայ երկնքի ցօղը ոռոգելու մեր ռաշպար դասի արտն ու արօտը։ Այլ կերպ՝ նա կորած է գլխովին։ Ինչպէս լսվում է, անձրևներ չը կան նաև Դարաչիչագի շրջանում։

Ս. Ե. Ա.

Անսպասելի կարկուտ Լագոդաղում

Լագօդաղ, 15 յունիսի

Յունիսի 13-ին, հինգշաբթի գիշերը, յանկարծակի երկինքը պատած մուգ-մոխրագոյն կուտակված ամպերը չարագուշակ աղէտներ էին գուշակում. և իրօք ուրբաթ լուսաձագին սարսափելի դղրդոցի ու ճայթիւնների ձայները քնաթաթախ բնակչութեան ահ ու դողով ոտքի կանգնեցրին ու հարաւ-արևմուտքից դէպի արևելք փչող խիստ քամու հետ տեղաց աղաւնու ձուի մեծութեամբ կարկուտ, որ 4 վերստ հասութեամբ ծածկեց աւանիս ու շրջակայ գիւղերի թէ արտերը ցորենի, գարու, սի-

---

*) Տես «Մշակ» № 111.

*) Այս րոպէիս այնքան օտարականներ ունի մեր քաղաքը, որ ամբողջ թաղաբաժիններ փակ են մնացել և բնակչութիւնից ամայացել։

նի հպատակը լինելու բաղդն ունեցող իրանց եղբայրներին, թեթևված մօսկօվական իշխանութիւնից, որ շուտով զգաց և գնահատեց նրանց բեղուն գործունէութեան լաւ-լաւ ձիրքերը, կարգ երկիրը մշակութեամբ բարեզարդելում և աւանները ծաղկող քաղաքների վերածելում։ Ճշմարիտ է որ, եթէ դա կարող է սփոփանք լինել, կան և ուրիշ հայեր, որոնք հալ և մաշ են լինում նմանօրինակ տխուր պայմանների մէջ՝ որքան իրանք Թիւրքիայի հայերը։ Կայ և մի ուրիշ երկիր ուր նրանց հետ չեն վարվում ինչպէս մի «ցանկալի» առաջադիմական տարրի հետ։ Բայց այդ ուրիշ երկիրը Պարսկաստան է կոչվում։

⁂

Մի վատթար բան ևս կայ։ Այն նահանգների վրա, որ երիտասարդ թիւրքերը Արևելեան Անատոլիա են կոչում, ասես թէ բառերը օգնէին իրականութիւնը փոխելուն, թխսում է այն ահալից աղէտի մշտամնայ սպառնալիքը, որ է միւսիւլմանական մոլեռանդութեան շղթայազերծ լինելը։

Եւ բնական հետևութիւն է։ Ի՞նչպէս կարող է Եւրոպային սահմանակից գոյութիւն ունենալ տասներորդ դարաշրջանին վայել մի ռեժիմ։ Միայն շնորհիւ ամբոխի բարբարոսական մտաւորականին, որի վրա խարսխվում է աւատական իշխանիկի յետաղակային տիրապետութիւնը։ Թիւրքը—որ սակայն, որքան հիմնաւորապէս այդ երկիրները ճանաչողը հաստատում է, մատչելի կը լինէր ժամանակակից ընկերութեամբ յարմարվելու—մնացել է այն՝ ինչ որ էր իսլամական աշխարհակալութեան շրջանում։ Կ. Պոլսի կենտրոնական կառավարութիւնը այլ մտահոգութիւն չէ ունեցել, բայց եթէ այդ ժողովուրդներից գաղանաբարոյ զինուորներ հանել։ Տեսանք այդպիսիների անցքը մայրաքաղաքով այս վերջին պատերազմի միջոցին։ Գեղեցիկ ու խրոխտ մարդիկ բոլորովին ապառազէն, այնքան անսանձելի՝ որ ինքն իսկ օսմանեան կառավարութիւնը, որ կանչել էր նրանց, տեսնելով որ այլ ևս կարող չէր լարել նրանց Թրակիայի դաշտերի վրա, քանի որ բօլգարները հասել էին Չաթալջա, սկսեց վախենալ նրանցից։ Նրանք կռիւ ու աւար էին պահանջում և, մեկուսացրած ի բնակութիւն Սկիւտարի մեծ զօրանոցում, մի մշտական սպառնալիք էին դարձել բնակիչների գլխին, գեաւուրների և միւսիւլմանների, թէ Սկիւտարում, թէ Հայդար-Փաշայում և թէ Ստամբօլում։ Դրանց ծայրայեղութիւնների առաջն առնելու համար, հարկ եղաւ հեծեալազօրքի մի քանի վաշտերով անպակաս հսկել նրանց վրա։ Բայց յամօթ այդ հսկման ու արգելքին, որ երեկոյեան ու գիշերները անցուդարձ չանեն, չարագործութիւնները չը պակասեցին։

Այդ մարդիկ արդիական դպրոցն ինչ է չը գիտեն։ Բոլոր ճանապարհորդներն Հայաստանում և Կիլիկիայում միաբան հաստատում են, որ այն գաւառներում թիւրքական դպրոցները խղճալի բաներ են։ Անսահման արհամարհանքով են նայում կրթական բազմաթիւ հաստատութիւններին, որ իրանց ծախքով հայերը պահում են, ուր և յաճախում է մի հոծ մանկութիւն լաւ մարդ դառնալու տենչով։ Գործիք թուլամորթութեան և վատասերութեան են դըպրոցները։ Տիրող ցեղին վայել դպրոցը լեռն է, ուր մարդ վարժվում է անխնայ, հեռուից, հրացանով, ատրճանակով սպանելու, իսկ մօտիկից, գաղանաբար, քիւրդական խէնչալով։ Ազնիւ, հաւատացող, ցեղին վայել դպրոցը մզկիթն է, ուր մարդ ուսանում է ատել գեաւուրին, հարստահարել և լկել նրան՝ յուսալով որ նա մի օր բոլորովին կը չնչվի։

Ուշադրութիւն դարձրէք. արածս զրպարտութիւն չէ, ինչպէս ենթադրել կարող էք, խոտական խաղաղ քաղաքացիներ, որ ներկայումս վիպասանական էք նկատում այդ տեսակի պատմութիւնները... Ես թիւրք պաշտօնեաներից եմ լսել, Հայաստանից վերադարձողներից, խորին վհատութեամբ ասելիս. «Զարհուրելի է այն, որ կարող է պատահել այնտեղ. և զարմանալի է, որ դեռ չէ պատահած»։ Ուշադրութիւն դարձրէք սրան էլ. խօսքը դիպուածական կացութեան մասին չէ, հետևանք է այն դաժանութեան, որ կրծում է ամբողջ իսլամի սիրտը, վերջին աղէտների պատճառով։ Հայերի ջարդը—ջարդ մեծ չափով, ըստ որում թշուառութեան այդ երկիրներում մանրիկ բռնութիւնը ամենօրեայ բան է, որին մարդիկ սովորած են—ջարդը մի ամբողջ ցեղի մի ուրիշ ցեղի ձեռքով՝ այնտեղ ժամանակից ի վեր օրակարգումն է։ Այստեղ ես մի հիւպատոսական տեղեկագրութեան թարգմանութիւնն ունեմ, չորս տարի առաջ գրված, որ այս խօսքերով է սկսվում. «Երեք հայերի սպանութիւնը, որ հեռագրով ծանուցի, անհրեկ է անում ամբողջ հայ ազգաբնակութիւնը այս երկրի, ըստ որում ամեն ինչ այն համոզմանն է բերում, որ ոճիրը մոլեռանդութիւնից է ծագում, նախագուշակ շատ աւելի մեծ ողբերգութիւնների, որոնք միշտ կարելի են և որ կարող են մօտալուտ լինել...»։ Լաւ յիշում եմ, արդէն երեք տարի կայ, երբ Եւրոպայում դեռ հաւատում էին Երիտասարդ-Թիւրքիային, հայ պատրիարքի, հայ պատգամաւորների, հայ անձնաւորութիւնների համարեա ամենօրեայ և անօգուտ թախանձանքները՝ որ հոգ տարվի Հայաստանի իրանց եղբայրների միշտ սպառնալիքի տակ գտնվող կեանքի պահպանութեանը։ Եւ չը կայ եւրոպական մի հիւպատոս Տրապիզոնում, Վանում, Երզնկայում, որ տեղեկագիր տեղեկագրի ետևից հաղորդած չը լինի իր կառավարութեանը միշտ աւելի և աւելի այդպիսի սոսկալի խնդիրների շուրջը։ Դիւանատները լիքը կը լինեն այդպիսի գրութիւններով։

Ի նկատի առէք, որ հայերը Թիւրքիային աւելի անձնուէր և աւելի հաւատարիմ ցեղն եղան նրա բարի և չար ժամերին։ Նրանք հայթայթեցին սուլթաններին դիւանագէտներ, գանձագէտներ, ճարտարապետներ, վաճառականներ, ընտիր արուեստագործ ճարտարներ։ Չը նայած կոտորածներին, նրանք գերազանց յարաբերութիւն պահպանեցին նոր ռէժիմի հետ։ «Մ. և Ա.» կօմիտէը իւրայինների շարքում համրում է բազմաթիւ հայեր, և հայ կազմակերպութիւնները օսմանեան յեղափոխական շարժմանը հաստատուն և ներգործօն նեցուկ եղան։ Բայց բանի տեղ չանցաւ նրանց այդ օրինաւորութիւնը, որի ապացոյցը աւելի ևս ակներև տրվեց վերջին պատերազմում, այնպէս որ օսմանեան զինուորական հաղորդագրութիւնները վեր են հանում, թէ ինչպէս հայերը թիւրքական շարքերում ամենալաւ կերպով կռւեցին։

Բայց թախանձանքները Կ. Պոլսում բոլորովին անօգուտ անցան։ Անօգուտ անցան դրականապէս և սրտայոյզ կոչերն առ Եւրոպա։

Այդպէս ուրեմն հայերն իրանք պէտք էր իրանց վրա մտածէին։ Եւ այսօր նորոգվում է Անատոլիայում այն՝ ինչ պատահեց Մակեդոնիայում մինչև բալկանեան յաղթութիւնները, ուր միակ զօրաւիգը մարդոյն՝ զէնքն էր։ Մեղմ ու խաղաղասէր բարքով, հայերը հարկադրված եղան յուսահատ խորհուրդներ սնուցանել։

Մի իտալացի, մի երկար ճանապարհորդութիւնից յետոյ Անատօլիայից վերադարձած, ինձ ասաց, թէ տեսել է հայերի տները հրացաններով և ռումբերով լի։ Մի քաղաքում, որի անունը չը տուեց յայտնի պատճառներով, հայերը որոշումն են արել անցնել յարձակողականին, երբ—ինչ իրանք ճակատագրական են համարում—ջարդարարները ներկայանան։ Որոշել են կրակ տալ միւսիւլմանական թաղին և շփոթից օգտվելով՝ պատնէշափակվել իրանց թաղում, ուր զինուորապէս կազմակերպված, անվեհեր սպասելու են յարձակվողներին։

Թիւրք կառավարութեանը չէ աջողվում թագցնել անկանոն կացութիւնը։ Օսմանեան հաղորդագրութիւններով խոստովանված նորագոյն դէպքերը պերճախօս են։ Մի հայ տան մէջ պատրաստելու միջոցին տրաքված ռումբերը, գրաւված զէնքերը, բիրտ ժանդարմները, ահաբեկութիւնները, ատելութիւնը, որ սպառնում է ընդարձակ կոտորածի փոխվել, ահա չարագուշակ նշանները։ Գրգռիչները օգուտ են քաղում իսլամի ձախորդութիւններից՝ տկար ցեղի դէմ սրելու համար քիւրդի ընչաքաղցութիւնը, ոխութիւնը։ Տկարը, նախատես մի րոպէից միւսը իր վրա փրթելիք աղէտին, պատրաստվում է յուսահատ պաշտպանութեան։ Մինչ այդ, Կ. Պոլսում մի յանձնաժողով է կազմվում, որ ըստ ամենայն հաւանականութեան որոշել է Հայաստան ուղարկել այն միսիօններից մէկին, որպիսիներից այս վերջին տարիներս յաճախակի ուղարկվում էին (սակայն ի՞նչ արդիւնքով) Ալբանիա...

Ի՞նչ է պատրաստվում։ Քննելի խնդիրը կարելի չէ մի հատ թղթակցութեամբ սպառել։ Մնացածը կը տեսնենք։

մինդըի, կորեկի, թէ այգիների ծառերն ու խաղողի վազերը տկլոցացրեց և թէ ծխախոտի պլանտացիաները հողի հետ հաւասարեցրեց՝ տալով նիւթական, բարոյական և ֆիզիքական վնասներ։

Գիւղացին, որ բարդ տոկոսներով փող էր վերցրել գրաւական տալով իր ունեցած մինուճար խրճիթը կամ մի կտոր արծաթը, այն յոյսով, որ կաշխատի ու կը վճարի, ի դերև ելան իր յոյսերը, ձեռքերը ծալած ու յուսահատված չը գիտէ՝ պա՞րտքը տալու համար մտածի, թէ՞ մի կտոր սև հացի, որ իր ընտանիքի գոյութիւնը մի կերպ պահպանի։ Վնասը մեծ է։

Բագ. ք. Սուքիասեան

ՄԻ ՔՍՏՄՆԵԼԻ ՈՃԻՐ

Հին-Նախիջևան, 14 յունիսի

Ամսիս 12-ի եր. ժ. 7$^{1}/_{2}$-ին մեր շրջանի Ալխաբաթ գիւղում տեղի ունեցաւ հետևեալ ոճրագործութիւնը։

Ոճրագործն էր նոյն գիւղացի մօտ 40 տարեկան Կարապետ Մարկոսեանը, արհեստով ատաղձագործ։ Զոհն է ծերունի Աբգար Ե. Տէր-Աբրահամեանի միակ նորահաս 16—17 տարեկան Շապուհ որդին։

Դէպքից մօտ երկու շաբաթ առաջ Ալխաբաթում մի կռիւ է տեղի ունենում ղազախեցի 15 բանւորների—որոնք այդ գիւղում բնակվելիս և մօտակայ կալարմաններում բանելիս են լինում—և գիւղացիների միջև։ Այդ օր Աստուածածնի տօնն էր, և գիւղում ուխտադրութիւն կար, հետևաբար գինովցած էին թէ յիշեալ բանւորները և թէ կռւի բուն պատճառ մի երկու գիւղացիք։ Բանւորները խփում են և գիւղացիներից մի քանիսի գլուխներն ու ձեռները կոտրում. յուզված կրքերը հանդարտեցնելու նպատակով առաջ եկողներին սկսում են խփել։ Վերջապէս գալիս է գիւղի մէլիքը, որպէսզի բաժանէ կռւողներին, բայց սրա էլ գլուխն են կոտրում։ Գիւղացիների երեխաները, տեսնելով իրանց բարեկամների ծնողներին արիւնշաղախ, նոյնպէս մասնակցում և սկսում են քարեր շպրտել այն տան վրա, որտեղ բնակվում էին բանւորները, ու կոտրում են տան ապակիների մի մասը։ Այդ տունը պատկանում էր ոճրագործ Կարապետ Մարկոսեանին։ Սա կռւի միջոցին բացակայելիս է եղել։ Բանւորների աշխատանքները ղեկավարող գնդապետը, լսելով դէպքի մասին, կանչում է բանւորներին և հրամայում նախ հաշտվել գիւղացիների հետ, կռւիներ չը սարքել, յետոյ վճարել մի քանի ռուբլի—կոտրատված ապակիների արժէքը—և ապա հեռանալ այդ գիւղից ու գնալ բնակվել Հին-Նախիջևանում, որ գտնվում է մէկ ու կէս վերստ հեռաւորութեան վրա։

Բանւորները լիովին կատարում են գնդապետի պահանջները։

Դրանց՝ գիւղից հեռանալու պատճառով ամսական մի քանի ռուբլու եկամուտից զրկվելը առիթ է դառնում Կարապետ Մարկոսեանին յղանալ մի վերին աստիճանի յանցաւոր միտք՝ սպանելու գիւղացիներից ոմանց։ Այդ մի քանի հոգին, որոնք կռիւ են ունեցել բանւորների հետ և, այսպէս ասած, պատճառ են դարձել վերջինների՝ գիւղից հեռանալուն, զգուշացել են մարդասպանից, որ շարունակ այս ու այն կողմում, նոյնիսկ հարևան Շխմահմուդ գիւղում, հրապարակով արտայայտել է իր մտադրութիւնը և, այդ վերջիններից վախենալով, վատաբար փոխում է միտքը և ի գործ դնում իր չար ծրագիրը քաղ. ուսումնարանի 16 տարեկան աշակերտ Շապուհ Տէր-Աբրահամեանի վրա։

Մարդասպանը ուղարկում է իր քրոջ-որդի 17 տարեկան Դանիէլ Շակոյեանցին, որ իբրև հասակակից ու ընկեր հրաւիրում է Շապուհին այգի՝ խնձոր ու ծիրան ուտելու։ Վերջինը ոչինչ կասկած չունենալով գնում է ընկերոջ հետ։ Դրանք մտնում են այգի, Դանիէլը սկսում է ծառից խնձոր քաղել, իսկ զոհը պառկում է մի կողքի վրա ծառից ոչ հեռու։ Այդ միջոցին Կարապետը յանկարծակի երևան գալով՝ ատրճանակը պարպում է զոհի ձախ կողքից։ Գնդակը մտնում է անմեղ պատանու կուրծքը, պատռում թոքերը ու մնում է։ Մարդասպանը միևնոյն ժամանակ քրոջ-որդուն սպառնում է ծպտուն չը հանել, ոչ ոքի չը յայտնել. հակառակ դէպքում իրան էլ կը սպանի։

Զոհի ծնողներն ու գիւղացիք ամբողջ գիշերը որոնում են Շապուհին ու չեն գտնում. գնում-բռնում են Դանիէլի օձիքից, թէ «քեզ հետ է գնացել երեխան, այժմ չը կայ»։ Դանիէլը գիշերը, մարդասպանի սպառնալիքից վախենալով, ուրանում է. իսկ առաւօտեան, երբ սպանվողի հայրը գտնում է որդու դիակը դրանց այգում, ձերբակալում են Դանիէլին ու գազան Կարապետին։ Դանիէլը խոստովանում է յունիսի 13-ին թէ շրջանիս առաջին դատաւորի պրիստաւ Լուկասեվիչին և թէ տալիս է իր ցուցմունքը քննիչին, միևնոյն ժամանակ աւելացնելով թէ «քեռիս պատուիրեց ինձ, որ եթէ գործը բացվի, ես ինձ վրա վերցնեմ յանցանքը և ասեմ, որ ես եմ սպանել, այլ ոչ թէ քեռիս։ Նա ինձ ասաց, թէ ինքն ինձ անպատճառ կազատէ։ Ես հո գիժ չեմ, որ ասեմ, թէ ես եմ սպանել, որ ինձ բռնեն, բանտարկեն. քեռիս սպանեց, թող քեռուս բռնեն»,—կրկնում էր Դանիէլը։

Քննիչի կարգադրութեամբ ձերբակալվեց մարդասպանն ու բանտ նետվեց՝ թողնելով թշուառ ծնողներին անտանելի վշտի մէջ։

Տեղացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Փոխարքայի՝ Բաթումից մեկնելուց առաջ, կուսին ներկայանալու համար, Թիֆլիսից մեկնեցին Փոխարքայի զինւորական մասի օգնական գեներալ Շատիլովը և Թիֆլիսի ոստիկանապետ գեներալ-մայոր Ջասիպկինը։ Երկու օր առաջ յիշեալ անձինք վերադարձան Թիֆլիս։

◆ Յունիսի 17-ին, Կովկասի փոխարքայի խորհրդի դահլիճում, գաղտնի խորհրդական Մ. Հակկէլի նախագահութեամբ կայացաւ փոխարքայից հաստատված մասնաժողովի նիստը՝ պոլիտեխնիկումի տեղի ուսումնասիրութեան հարցի առիթով։ Խորհրդակցութեանը մասնակցում էին մասնաժողովի 19 անդամները։ Սկզբում քննութեան ենթարկվեց մասնաժողովի զբաղմունքների ծրագիրը։ Որովհետև մասնաժողովի անդամներից մի քանիսը յայտնեցին, թէ իրանք իբրև եկւորներ անկարող են երկար մնալ Թիֆլիսում, և որ անհրաժեշտ է ծանօթանալ պոլիտեխնիկումի համար յատկացված հողաբաժինների տեղադրութեան հետ, մասնաժողովը լսեց իրերի այժմեան դրութեան մասին Կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձու Րուդոլֆի, Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխ. Աբխազիի և քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի ներկայացրած զեկուցումները։ Որոշվեց յունիսի 18-ից դիտել Նաւթլուղի և Սաբուրթալոյի հողերը։ Մասնաժողովի երկրորդ նիստը նշանակված է այսօր, ցերեկվայ ժ. 1-ին։

◆ Ստացանք Գանձակ կայարանից Տէր-Ստեփանեանից 5 ռուբլի խմբագրութեան հայեցողութեամբ գործադրելու Օլգէնինի դասախօսութեան մէջ ակնարկված նպատակներից մէկն ու մէկի օգտին։

◆ «Кавказъ»-ում կարդում ենք. «Յունիսի 16-ին, երեկոյեան ժամը 5-ին, Ջերքեզովսկայա փողոցի բնակիչները վկայ եղան հետևեալ քստմնելի տեսարանին. № 53 էլեկտրաքարշի վագոնում նստել էին ոմն Մ. Ղարիբեան և Ս. Բօզանեան, որոնք տոմսակի համար առաջարկեցին վագոնի կոնդուկտոր Ս. Տեդէշվիլիին 3 ր. թղթադրամ։ Սակայն կոնդուկտորը մերժեց նրանց տոմսակ տալ, պատճառաբանելով որ նրա մօտ մանրացնելու փող չը կայ և, կանգնեցնելով վագոնը, առաջարկեց Ղարիբեանին և Բօզանեանին իջնել վագոնից։ Բայց սրանք այդ հրամանը կատարելուց հրաժարվեցին, ասելով որ կոնդուկտորը պէտք է ունենայ մանր դրամ։ Սկսվեց վէճ, իսկ յետոյ սկսվեց ծեծ ու ջարդ։ Այդ ժամանակ մօտեցաւ № 63 վագոնը։ Սրա վատման Դ. Զօխէլին վերցրեց երկաթէ ձողը, որով փոխվում է գծի ուղղութիւնը, և սկսեց դրանով հարուածել Ղարիբեանին և Բօզանեանին։ Զօխէլին միացան Ր. Մչեդլիձէ, Կուցէնկո վատմանները և կոնդուկտոր Ն. Գիգաուրին, որոնք նոյնպէս մտան կռւի մէջ։ Ընդհանուր ծեծ ու ջարդի մէջ վիրաւորվեցին Ղարիբեանը և Բօզանեանը և հասարակութիւնից Տ. Վարդանեանը և Դ. Մխիթարեանը։ Ծեծ ու ջարդին վերջ դրեց օգնութեան եկած պրիստաւ Լեվաշօվը։ Վնասվածներին ուղարկեցին Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Արամեանցի հիւանդանոցում ժուռնալիստ Լ. Կիպիանին ենթարկվել է անդամահատութեան. նրա երիկամունքները հանել են։

◆ Դժբաղդ դէպքերից խուսափելու համար, Թիֆլիսի ոստիկանապետը երկրորդել է էլեկտրաքարշի վերատեսուչ Բէլոյի սկզբնական կարգադրութիւնը այն մասին, որպէսզի կոնդուկտորները և ոստիկանական պաշտօնեաները խստիւ հետևեն, որպէսզի էլեկտրաքարշի վագոններից նստողները չիջնեն գնալու ժամանակ կամ թէ գնալիս չը թռչեն վագոնների վրա։ Յանցաւորների նկատմամբ անմիջապէս կազմվելու է արձանագրութիւն՝ նրանց օրինական պատասխանատուութեան ենթարկելու համար։

◆ Թանդոյեան եկեղեցու ծխ. հոգաբարձութիւնը յայտնում է ի գիտութիւն խնդրատու դասատուների, որ իր խնամքին յանձնված Թանդոյեան դպրոցի և նոր բացվելիք Շելեգովեան դպրոցի Ա. բաժանմունքի համար ուսուցչական խումբը կազմված է, դասաբաշխումը կատարված և ազատ դասեր չը կան։

◆ Ներկայ թւի յունիսին Կ. Հայուհեաց Բ. Ընկերութեան կար ու ձևի արհեստանոցն աւարտեցին հետևեալ 14 անձինք՝ Դարչինեան Վարսենիկ, Խաչատրեան Շուշանիկ, Խուդինեան Վարդանուշ, Ղազարեան Սօֆիա, Միրզոյեան Արուսեակ, Մկրտչեան Վարսենիկ, Յարութիւնեան Շողակաթ, Տէր-Սարգսեան Վարդանոյշ (Թիֆլիսեցիք), Թերզեան Վիրգինէ (կարնեցի), Թոխաթցեան Վարդիթեր (կարսեցի), Խաչատրեան Վարսենիկ (շուշեցի), Տէր-Միրաքեան Շողակաթ (ախալքալաքցի), Տէր-Խաչատրեան Աստղիկ (ղազախեցի)։

◆ Հայուհեաց «Մեղու» աշխատանքի տան վարչութիւնը խնդրում է մեզ ասել, որ ինքը շնորհակալութեամբ ստացել է X.-ից 300 ռուբլի՝ Հալաբարի բաժնի արկղագործական արհեստանոցի ձրի ճաշարանի օգտին, և Թիֆլիսի քաղաքային վարկային ընկերութիւնից՝ 75 ռուբլի։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 14 յունիսի

Մօտ 7—8 ամիս առաջ 3 հոգի բարեմիտ պարոնների ստորագրութեամբ կոչ հրատարակվեց տեղական թերթերում, յորդորելով Ներսիսեան դպրոցի նախկին սաներին ձեռք բերել ընդհանուր ուժերով «Ներսէսի լիճը էջմիածնում» նկարը և ընծայել նորակառոյց Ներսիսեան դպրոցին։ Այս միտքը այնքան հաճելի թւաց ինձ, որ առաջարկեցի ամեն տեսակ զիջողութիւն և աջակցութիւն, գործը թեթևացնելու և հեշտացնելու համար։

Որքան ինձ յայտնի է, վերոյիշեալ կոչը արձագանք չը գտաւ, ոչ մի ուշադրութեան չարժանացաւ մինչև օրս, եթէ չը հաշւենք այն մի երկու տասնեակ ռուբլիները, որ ուղարկվել է խմբագրութիւններին մի քանի անձանց կողմից։

Այս հարցը փակելու համար անհրաժեշտ եմ համարում յայտնել ի գիտութիւն ում հարկն է, որ վերոյիշեալ բարի նպատակը իրագործված տեսնելու համար՝ դարձեալ կը սպասեմ մինչև այս տարվայ հոկտեմբերի վերջը, իսկ այնուհետև թող ներվի ինձ ազատ համարել այդ նկարը և այլ կերպ որոշել նրա վիճակը։

Գ. Բաշինջաղեան

Թիֆլիս, 14 յունիսի

«Մշակի» № 128-ի մէջ տպված է իմ մասին, մի անճիշդ տեղեկութիւն, որը շօշափում է իմ պատիւը։

Իմ ասելիքս այն է, որ ոչ մի ժամանակ, ո՛չ գրաւոր և ո՛չ էլ բանաւոր կերպով ես չեմ զրպարտել Թեմակալ Մեսրոպ եպիսկոպոսի առաջ իմ նախկին պաշտօնակից հոգաբարձուներին և չեմ ամբաստանել վերջիններիս անգործունէութեան մասին սրբազանին, որովհետև նորին սրբազնութիւնը իմ խորհուրդների և վատաբանութեան կարիք բնաւ չէր զգում, մանաւանդ որ իմ բնաւորութիւնիցս դուրս է մէկին կամ միւսին զրպարտել, այլ ընդհակառակն սրբազանին լաւ յայտնի լինելով վերոյիշեալ հոգաբարձուների վերաբերմունքի մասին դէպի կրթական և եկեղեցական գործերը և գործավարութիւնը, բարւոք է համարել արձակել պաշտօններից։

Կաթուղիկէ ս. Գէորգ եկեղեցու երէցփոխ՝
Աբգար Աբուլեանց

Թիֆլիս, 13 յունիսի

«Մշակի» № 128-ի լուրերի բաժնում լոյս է տեսած մի տեղեկութիւն, որի առիթով անհրաժեշտ եմ համարում յայտնել հետևեալը։

Չը մտնելով միանգամայն սրբազան առաջնորդի կարգադրութեան քննութեան մէջ, ես հրապարակով յայտնում եմ, որ թէ իմ և թէ պ. երէցփոխի կողմից ոչ մի «ըրտայօղ» զեկուցում չի եղել, այլ սրբազան առաջնորդ ինքն անձամբ ծանօթացել ու իրազեկ է եղել ս. Գէորգի հոգաբարձութեան գործերի հետ, քանիցս հրաւիրելով հոգաբարձութեան բոլոր անդամներին իր մօտ և միասին խորհրդակցելով մեր դպրոցին վերաբերեալ բոլոր հարցերի մասին։

Ս. Գէորգ եկեղեցու նախկին հոգ. անդամ՝
Ստեփաննոս աւ. ք. Սամուէլեանց

Թիֆլիս, 12 յունիսի

«Մշակի» № 125-ի Ներքին լուրերի բաժնում կարդացինք, որ մեր խանութի նախկին ծառայողուհի օրիորդ Հռիփսիմէ Ղազանջեանը յունիսի 4-ին ծառայութեան ժամանակ խմեց 1 շիշ քացախի էսենցիա, որից և վախճանվեց, և այլն և այլն։ Վերջում գրված էր որ «կրպակատիրոջ ասելով հանգուցեալը վատնել էր 260 ռուբլի»։

Սոյն գրութեամբս մենք կտրականապէս յայտնում ենք, որ մեր նախկին ծառայողուհի օր. Հռիփսիմէ Ղազանջեանը 2 տարի ծառայելով մեր խանութում, ոչ մի կոպէկի վատնում չէ եղել նրա օրօք, և բացի այդ մենք այդ չեղած վատնումի մասին ոչ ոքի ոչինչ չենք յայտնել և չը գիտենք թէ այդպիսի սխալ լուր ինչպէս է զետեղվել յարգելի թերթումդ։

Վերոյիշեալի մասին յայտնելով ի գիտութիւն ընդհանրութեան, սրանով խոնարհաբար խնդրում ենք յարգելի թերթիդ մօտակայ համարներից մէկում զետեղէք մեր այս հերքումը։

Տեղական միւս հայկական թերթերը, որը տպել է իր էջերում այս լուրը, խնդրում ենք արտատպել մեր այս հերքումը։

«Գ. Ց. Յակոբեանցի Որդիք և ընկ.»
Առևտր. Տան կողմից՝ Ց. Յակոբեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ «День» լրագրին հաղորդում են, որ բալկանեան չորս պրեմիէրների Պետերբուրգ գալը վերջնականապէս վճռվեց։

◆ «Н. Вр.»-ին հեռագրում են, որ Կ. Պօլսում ձերբակալվել է սուլթանի մահացված փեսայի եղբայր Մահմուդ-բէյը։ Սուլթանի առողջութիւնը չափազանց քայքայվել է և լուրջ վտանգ է ներշնչում։

◆ Պետերբուրգում վախճանվեց յայտնի գրող Օստրօվսկու դուստր տիկին Շաբլէնը։

◆ Խարկովի քաղաքային դուման որոշեց գնել էլեկտրաքարշի ձեռնարկութիւնը, վճարելով բելգիական ընկերութեանը 2.150,000 ռուբլի։

◆ Լոնդոնից «Н. В.»-ին հաղորդում են. «Սիօնիստների միջազգային կազմակերպութիւնը վճռեց առաջարկել Վիէննայում սեպտ. 2-ին բացվող սիօնիստների կօնգրէսին՝ աշխատել գլուխ բերել հրէական համալսարան Երուսաղէմում, մասնաւորապէս ռուսական հրէաների համար, որոնց մուտքը Ռուսաստանի և Գերմանիայի համալսարանները դժուարացնում են»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

17 յունիսի

ՆՈՐ-ԲՈՒԽԱՐԱ։ Հրդեհը ոչնչացրեց մի շարք խանութներ։ Վնասները աւելի քան 100,000 ր. են։

ԳԼԱԶԳՕ։ Այրվեց Բէլէկիւրէյն անընակ ամրոցը։ Այրված գոյքի արժէքը 100,000 ֆունտ է։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Արևմտեան քաղաքներում եղել են 33 մահացութեան դէպքեր արևահարութիւնից։

ԼՕՁ։ «Պօզնանսկի և Գէյեր» մանուֆակտուրային գործարանի բանւորներից 3000 հոգի պահանջեցին աւելացնել աշխատավարձը, բայց մերժում ստացան։ Նախատեսվում է, որ գործարանը կը փակվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումայական ֆինանսական մասնաժողովը ընդունեց այն օրինագիծը, որ թոյլ է տալիս ստանալ արտասահմանից անմաքս քարածուխ արքունի և մասնաւոր երկաթուղիների պէտքերի համար։

Ցեր. ժ. 1 ու 8 րոպէին օդագնաց Վասիլեվը թռաւ իր գործիքով դէպի Մոսկվա, նպատակ ունենալով ստանալ իշխ. Աբամելէք Լազարեանի մրցանակը ի յիշատակ Ռոմանօվների Տան թագաւորութեան յոբելեանի։

ԼԻԷԺ։ Օդագնաց Բէրիգօն մի մարդու հետ ընկաւ թռիչքի ժամանակ. Բէրիգօն ծանր վիրաւորվեց, ճանապարհորդը մահացաւ։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Ֆրանսիացի յայտնի օդագնաց Բրէնդէժօնկը ժ. 4 և 47 ր. բարձրացաւ Մալմալէտում և ժ. 7 ու 30 րոպէին գեղեցիկ պտոյտով աւարտեց թռիչքը ծովի վրա։ Ժողովրդի ոգևորված բացագանչութիւններով նրան նստեցրին ոսկէ աթոռի վրա և աէրոդրոմից տարան աւտոմօբիլով։ Օդագնաց ընկերութիւնը ի պատիւ Բրէնդէժօնկի ճաշ տուեց։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

Հաղրութ, Հայկանուշին.—Ձեր ակնարկած թղթակցութիւնը («Փչացած բարքեր») ուղարկված 25 կ. նամականիշի հետ միասին, ըստ ձեր կարգադրութեան, յանձնեցինք «Հորիզոնի» խմբագրութեանը, որովհետև «Մշակում» չէր կարող տպվել այն։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թւի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացք** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պոստաւոր գնացք** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար գնացք** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ.։ Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացք** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—**Պոստաւոր գնացք** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացք** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդատար գնացք** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացք** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պոստաւոր գնացք** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 48 ր. գիշ.։ Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացք** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդատար-ապրանքատար գնացք** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄ.—**Մարդատար գնացք** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացք** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պոստաւոր գնացք** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդատար գնացք** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացք** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պոստաւոր գնացք** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդատար գնացք** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդատար գնացք** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացք** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստաւոր գնացք** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացք** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացք** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացք** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդատար գնացք** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՌԱԿԱ (Գողթանում) գիւղի միդասեան ուսումնարանի համար հարկաւոր է

մի ուսուցիչ և մի վարժուհի

(Ցանկալի է, որ վարժուհին իմանար նաև կար ու ձև)։

Դիմել՝ Тифлисъ, Феодоровская № 8. Гевонду Акопову.

506. 2—2

Ս.-ԽԱՉ քաղաքի համար հարկաւոր է մի հմուտ

Ուսուցիչ-խմբապետ

900 ռուբլի ռոճիկով։ Դիմել՝ Нальчикъ (Терск. обл.). Священнику Н. Чугурьянцъ д. Т. Моргачева.

(ա. օ.) 488. 6—6

ՁԵՂԱԾ ԴԷՊՔ!!!

ՄԻԱՅՆ 2 Ր. 95 Կ.

Ուղարկում ենք հետևեալ 14 արժէքաւոր իրերը. 1) Տղամարդու գրպանի շքեղ և դիմացկուն ժամացոյց «Անկեր» (ոչ-ցիլինդր) անգլիական սև պողպատից, գլխից լարվող 36 ժամը մէկ անգամ, ընթացքը ձայնեղ՝ 15 քարով։ 2) Նորաձև շքեղ շղթայ, իսկ կանանց համար պարանոցի շղթայ։ 3) Բրէլօկ կինեմատօգրաֆ հետաքրքրական նկար. կամ կողմնացոյց։ 4) Զամշէ քսակ ժամացոյցը փչանալուց պահպանելու համար։ 5) Գեղեցիկ մատանի ամերիկ. «Դուբլէ» ոսկուց պարիզեան ակնով։ 6) Թատրոնական բինօկլ 4 ախրօմատիկ. ապակով սովորական մեծութեան, որ մօտեցնում է շատ հեռու տարածութեան վրա։ Ժամացոյցը գողերից պաշտպանող։ 8) Պարիզեան պլաստօգրաֆ, որ կէտ առ կէտ ցոյց է տալիս ամենատեսակ տեսարաններ ինչպէս բնականում։ 9—14) Սրա համար 6 հատ շատ հետաքրքրական նկարներ։ Ամբողջ զարնիտուրի գինն է միայն **2 ր. 95 կ.**, 2 զարն. **5 ր. 50 կ.**, 4 զարն. **10 ր. 50 կ.**։ Վերոյիշեալ զարնիտուրը ամենալաւ յատկութեան և բարձր տեսակի ժամացոյցով և իրերով **3 ր. 95 կ.**, 2 զարն. **7 ր. 40 կ.**։ Զարնիտուր՝ կանացի ժամացոյցով—**3 ր. 70 կ.**։ Նոյնպիսին 3 փական ունեցող ժամացոյցով 1 ռուբ. թանկ։ Ճանապարհածախսը 2 հատին 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Ժամացոյցն ուղարկվում է ճշգրտված մինչև րոպէն և 8 տարվայ երաշխաւորութեամբ՝ վերադիր վճարով և առանց կանխավճարի։

Հասցէագրել. Т-во «АККУРАТНОСТЬ». Варшава. отд. 92.

(В. 32287) 3—3

ԿՈՉ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ. ԴՊՐՈՑԻ 75-ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Լոյս է տեսնելու «ՏԱՐԱԶԻ» մի յատուկ ալբոմ-ալմանախ—

«**ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ**» պերճաշուք մի հոյակապ հրատարակութիւն՝ ՄՆԱՑՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ ՂԱՐԱԲԱՂԻ։ Այս շքեղ հանդէսի մէջ պիտի լինեն XIX դարի և մինչև օրս ղարաբաղցի այն արհեստաւորների, արուեստագէտների, գիտնականների, գրականագէտների, գեղագէտների, մանկավարժների, իրաւաբանների, բժիշկների, ինժեներների, բարեգործների, հասարակական գործիչների, քաղաքագէտների, աստիճանաւորների, զինւորականների, զօրապետների, լրագրողների, հրապարակախօսների, բարձրագոյն դպրոցներ աւարտած հայուհիների, թատերասէրների, առևտրականների, արդիւնաբերողների, վաճառականների, ազնուականների, հոգևորականների, գեղջուկների, մելիքների պատկերները, որոնք իրանց գործով և կեանքով նշանաւոր են եղել։

Տպագրվելու են «ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» այս փայլուն հանդէսի մէջ տեսարաններ ամբողջ Ղարաբաղի բոլոր նշանաւոր վայրերի, ինչպէս և ղարաբաղցիներին պատկանող զանազան քաղաքներում, երկիրներում տների, գործարանների պատկերները։

Եւ որովհետև անհնար է բոլոր անհրաժեշտ լուսանկարները ձեռք բերելու, ուստի այսու յարգանօք հրաւիրվում են ձեռնհաս բոլոր ղարաբաղցիները աջակցել մեզ և ՇՈՒՏԱՓՈՅԹ ՀԱՍՑՆԵԼ իրանց իմացած անձինքների և բնակած վայրերի լուսանկարները, հէնց լուսանկարների ետև էլ ամփոփ գրելով պատկերի բովանդակութիւնը։

Յօդուածները «ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» ալբոմ-ալմանախի համար, ինչպէս և երգերն ու նօտաները բոլորը բացառապէս լինելու են ղարաբաղցիների մտքի, արուեստի և գրչի արտադրութիւններ։

«ՂԱՐԱԲԱՂ ԵՒ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ» ալբոմ-ալմանախի բաժանորդագինը 3 ր. (մինչև յունիսի 15-ը բաժանորդագրվողների համար 2 ր.), մելօվի փայլուն թղթի վրա 25 ր.

◆ ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ◆

Դիմել՝ Тифлисъ, **БЮРО ПЕЧАТИ**, Головинскій проспектъ, № 41.

(չ. ու) 31. 5—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный